# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 15 (1315) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 5, 2007
VOLUME 27, NO. 15 (1315) SATURDAY, MAY 5, 2007

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ԲԱՐԻ ԱՌԱՔԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԹԷՊԷՏ ԲԱՑ՝ ՀԱՐՑԱԴՐՈՒՄ ՄԸ

**ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ**

Լոս Անճելոս տուած իր աւանդական դարձած այցելութիւններուն շրջագծէն ներս, այս օրերուն, հիւրաբար մեր մէջ կը գտնուի Հայկական Համաշխարհային Քոնկրէսի նախագահ Պրն. Արա Աբրահամեան:

Հայաստանեայց Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Խորհուրդը, ի պատիւ անոր՝ ընդունելութիւն մը կազմակերպած էր Երեքշաբթի, Մայիս 2, 2007-ին, կ. վ. ժամը 7.30-ին, Ազգային Առաջնորդարանի Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան համալիրի Գալայճեան հանդիսասրահին մէջ, ուր Պրն. Արա Աբրահամեան համեմատաբար ծաւալուն զեկոյցով մը, անդրադարձաւ իր գլխաւորած կազմակերպութեան առաջադրանքներուն մասին:

Համապարփակ ձեւով, Պրն. Աբրահամեան անոնց մասին անդրադարձած էր դեռեւս 2003 թուին, նոյն հոգեւոր կեդրոնէն ներս:

Օրին, մենք դրական գտած էինք Պրն. Աբրահամեանի նախաձեռնութիւնը: Քոնկրէսը կ'առաջադրէր ռուսահայոց մշակութային կեանքի կազմակերպումը, հայ-ռուս յարաբերութիւններու սերտացումը, Հայաստանի տնտեսական ու արդիւնաբերական բարգաւաճումը, Արցախի հիմնահարցի լուծման հայոց զօրակցութիւնը, Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտութիւնը Հայ Դատի հետապնդման շրջագծէն ներս, եւ վերջապէս, Սփիւռք-Հայրենիք գործակցութիւնը: Հարցեր՝ որոնք ընդհանրական բնոյթ ունենալով, կը շահագրգռէին ամէն հայ անհատի:

Պրն. Ապրահամեանի նախաձեռնութիւնը դրական համարած էինք, նաեւ քաջալերած, հիմնուելով մեր համագումարներու՝ ազգային ընդհանրական բնոյթի հիմնահարցերու շուրջ գործակցութեան հրամայականը շեշտող բանաձեւումներուն վրայ:

Ս. Դ.Հնչակեան կուսակցութեան 12-րդ Համագումարը , որոշում կ'անցնէր ազգային ընդհանրական բնոյթի հարցերը՝ օրինակի համար ազգապահպանում, հայոց ցեղասպանութեան ճանաչում, Հայրենիք-Սփիւռք սերտ գործակցութիւն՝ հետապնդել ազգային միասնութեամբ: Այդ իմաստով, կը գտնէինք, թէ Պրն. Աբրահամեանի համահայկական Քոնկրէսի օրակարգի վրայ գտնուող հարցերը հաւասարապէս կը յուզեն ամբողջ հայութիւնը, սկսած Հայաստանէն՝ մինչեւ Արցախ, եւ հայկական Սփիւռք:

Այդ կապակցութեամբ՝ դիտել կուտայինք, թէ ամէն հայ անհատ մտահոգ է Հայաստանի տնտեսա-

Տար.ը էջ 16

## ԻՇԽԱՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԽԱԽՏԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ

### ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ ԵՒ ՄԱԿ ԿԸ ՄԵՂԱԴՐՈՒԻՆ ԿԱՇԱՌՔ ԲԱԺՆԵԼՈՒ ՄԷՋ

*Մայիս 12-ին տեղի ունենալիք Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու քարոզարշաւը կը մօտենայ իր աւարտին եւ այս միջոցին, Միջազգային եւ տեղական դիտորդական կազմակերպութիւնները կը շարունակեն արձանագրել իշխանական չորս կուսակցութիւններու՝ «Հանրապետական»-ի, «Բարգաւաճ Հայաստան»-ի, Դաշնակցութեան եւ ՄԱԿ-ի կողմէ ընտրական օրէնքները խախտելու, պետական միջոցները օգտագործելու եւ կաշառք բաժնելու մեծ թիւով դէպքեր:*

*Արձանագրուած խախտումներու շարքին են պետական միջոցներու հաստատութիւններու եւ դպրոցներու օգտագործումը ընտրական նպատակներու համար, պետական եւ անձնական հեռուստակայաններու կողմէ իշխանական կուսակցութիւններու փառաբանումը, ընտրողներու կողմէ ընդդիմադիր կուսակցութիւններու հանդիպումները խափանելու աշխատանքները, գումարի դիմաց անձագրերու հաւաքագրումը, լայնածաւալ կաշառք բաժանելու աշխատանքները:*

*Դիտորդներու կողմէ նկատուող խախտումներու որպէս օրինակ վերջին օրերուն արձանագրուեցան հետեւեալ փաստերը:*

*-Հելսինքեան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենեակի պատրաստած տեղեկանքը կը յայտնէ թէ, ՀՅԴ կուսակցութեան պաստառները փողոցներու վրայ կը բաժնուին անչափահաս երեխաներու կողմէ, ինչ որ արգիլուած է ՀՀ «Գովազդի մասին» օրէնքով:*

*-Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան նախընտրական շտապի կողմէ ալիւրի անհաւասար բաժանումը պատճառ դարձած է տարաձայնութիւններու եւ վիճաբանութեան:*

*-Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչները կ'առաջարկեն 5000 դրամ 1 ձայնի դիմաց:*

*-ՄԱԿ-ի գրասենեակէն ներս քաղաքացիներու կողմէ սոցիալական հարցերու լուծման համար դիմում-խնդրանքներ կը հաւաքուին:*

*-Գագի գրասենեակի աշխատակիցներուն թելադրուած է ստորագրութիւններ հաւաքել ՀՀԿ-ի օգտին: Իւրաքանչիւր աշխատող 10 ստորագրութիւն եւ անձնագիրի տուեալներ պէտք է ներկայացնէ:*

*-Վանաձորի քաղաքապետ Սամուէլ Դարբինեան հանդիպած է թիւ 15 մանկապարտէզի ծնողներու հետ, հանդիպման ընթացքում խնդրուած է ընտրել Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը:*

*-Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան ներկայացուցիչները ծրարներով կ'այցելեն բնակարանները եւ կուսակցական փաստաթուղթի վրայ կը լրացնեն ընտանիքի անդամների անձնական տուեալները:*

*-Վանաձորի Աղայեան փողոցի վրայ գտնուող ՀՅԴ նախընտրական շտապը բնակիչներուն կը բաժնէ 5000 դրամ կաշառք:*

*Ընդդիմադիր կուսակցութիւններու կարծիքով, անհաւասար պայմաններու տակ տեղի ունեցող այս ընտրարշաւը այժմէն իսկ կու գայ կասկածի տակ դնելու ամբողջ գործընթացը: Իսկ եթէ գայ ասոնց վրայ աւելնալու քուէարկութեան օրը սպասուող խախտումները, այս ընտրութիւնները պիտի չտարբերին նախորդէն, որ յատկանշուեցաւ լայնածաւալ կեղծիքներով:*

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ ԱԶԱՏ ՉԷ» ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ «ՖՐԻՏԸՄ ՀԱՈՒՍ»

*«Ֆրիտըմ Հաուս» (Ազատութեան Տուն) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը Մայիս 1-ին հրապարակեց «Աշխարհի մէջ մամուլի ազատութեան» 2006 թուականի տեղեկագիրը, ուր կ'ըսուի թէ, մամուլի ազատութեան անկումը շարունակուած է անցեալ տարի:*

*Ինչպէս նախորդ զեկոյցին մէջ, այս անգամ եւս Հայաստան կը դասուի «ոչ ազատ» երկիրներու շարքին: 100-ի վրայ ստանալով 64 կէտ:*

*Ազդեցիկ կազմակերպութեան տեղեկագիրին մէջ ըսուած է, որ Հայաստանի սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ մամուլի ազատութիւնը, «սակայն կառավարութիւնը եւ անոնք, որոնք մօտ կանգնած են իշխող կուսակցութեան, գործնականին մէջ չեն ապահովեր մամուլի ազատութիւնը»:*

*Զեկոյցի մէջ յիշուած է «Ժամանակ Երեւան» թերթի խմբագիր Արման Բաբաջանեանի պարագան: Բանակէն խուսափելու մեղադրանքով ան դատապարտուած է 4 տարուայ բանտարկութեան: «Իրաւապաշտպան կազմակերպութիւններու համոզմամբ, դատավարութեան հիմքը եղած են քաղաքական շարժառիթներ, դատարանը սահմանել է նմանօրինակ յանցանքի համար չափազանց խիստ պատիժ», - ըսուած է զեկոյցին մէջ:*

*«Նախագահը կը նշանակէ Հեռուստատեսութեան եւ Ռատիոյի Ազգային Յանձնաժողովի բոլոր անդամները եւ հեռարձակուող մամուլի աշխատանքը կարգաւորող այդ կառոյցի գործունէութիւնը կը գտնուի կառավարութեան հսկողութեան տակ եւ թափանցիկ չէ»-.կ'ըսէ տեղեկագիրը աւելցնելով, որ «Ա1+»-ը ազդեցիկ եւ քաղաքական առումով անկախ հեռուստակայան էր եւ անցած տարուայ ընթացքում վերստին արտօնագիր չստացաւ: «2002 թուականին վտարուելով եթերէ՝ «Ա1+»-ը 12 անգամ արտօնագրի դիմում ներկայացուցած է եւ 12 անգամն էլ պարտուել»:*

*Զեկոյցին մէջ նաեւ ըսուած է, որ կառավարութիւնը մամուլի նկատմամբ ուղղակի հսկողութիւն կամ գրաքննութիւն չիրականացնէր, սակայն մամուլի սեփականատէրերուն վրայ ոչ պաշտօնական ճնշումներու միջոցով հզօր ազդեցութիւն կ'ապահովուի, յատկապէս հեռարձակուող մամուլի վրայ:*

*Զեկոյցին մէջ յիշուած են նաեւ լրագրողներու վրայ բիրտ յարձակումներու փաստերը:*

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԳՏՆՈՒՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒՆ ՔՈՒԷԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԷՆ ԶՐԿԵԼԸ, ԸՆԿԵՐՈՒՀԻ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՆԿԱՏԷ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԽԱԽՏՈՒՄ

*«Առաւօտ» օրաթերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի ատենապետ Ընկերուհի Լուսմիլա Սարգսեան իր բողոքը յայտնած է այն կապակցութեամբ, որ ընտրական օրէնքը փոխելով, իշխանութիւնները որոշած են արտասահմանի մէջ ընտրելու իրաւունք չտալ Հայաստանի քաղաքացիներուն:*

*«Իշխանութիւնը որոշեց, որ Հայաստանից դուրս գտնուող մեր քաղաքացիները չեն կարող դեսպանատներում եւ ՀՀ այլ ներկայացուցչութիւններում մասնակցել քուէարկութեան, սակայն այդպէս էլ տրամաբանական եւ համոզիչ հիմնաւորում չներկայացուեց: Սա մարդու իրաւունքների կոպիտ խախտում է: Ի վերջոյ, մարդիկ լաւ կեանքից չէ, որ լքել են Հայաստանը: Այս հարցում մեղաւոր են հենց իշխանութիւնները: Աշխատանք չապահովելով, մարդկանց գցել են երկրէ-երկիր քիչ է՝ հիմա էլ քուէարկելու իրաւունքից են զրկել»,- ըսած է ՍԴՀԿ ատենապետը:*

*Խօսելով քարոզարշաւի մասին Լուսմիլա Սարգսեան յայտնած է որ ըլլալով Լոռու, Շիրակի*

Տար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԶԱՐՄԱՆՔ

*Ինչպէս երեւում է, ԱԺ խօսնակ **ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆԸ** ստոյգ որոշել է դառնալ մեր «զարմացած« խորագրի մշտական հերոսը: Այս անգամ էլ այդ իմաստնագոյն պետական այրի գլխաւորած հայոց պատուիրակութիւնը զարմանալիօրէն որոշել է չմասնակցել ԵԽԽՎ Ղարաբաղի հարցով ենթայանձնաժողովի նիստին: Ու Տիգրան Թորոսեանը դրան տուել է զարմանալի բացատրութիւն՝ ասելով, որ այդ նիստերը դատարկ եւ անպտուղ են, քանի որ նախորդ նիստին, որին մեր պատուիրակութիւնը չէր մասնակցում վարչապետ Անդրանիկ Մարգարեանի յուղարկաւորութեան պատճառով, ատրպէյճանցիները մեզ համար անցանկալի մի քանի ձեւակերպումներ են «սաղցրել«: Զարմանալով հանդերձ՝ մնում է հարցադրել. ո՞վ էր ձեզ խանգարում մասնակցել ու չթողնել, համ էլ այդ ո՞րտեղ է գրուած, որ նոյնիսկ ամենակարեւոր պաշտօնեայի յուղարկաւորութիւնը պէտք է պատճառ դառնայ, որ պետական նշանակութեան գործերը, այն էլ՝ դիւանագիտական ճակատում, չարուեն: Նոյն զարմանալի տրամաբանութեամբ յուղարկաւորութեան համար գինուորը պէտք է լքի մարտական դիրքը ու չկրակի հակառակորդի ուղղութեամբ...*

*Մեզ յոյժ զարմացրեց եւ ԿԸՅ նախագահ **ԳԱՐԵԳԻՆ ԱԶԱՐԵԱՆԸ**՝ յայտարարելով. «Եթէ մէկն ասի, որ աշխարհում կայ գոնէ մի ցուցակ, որտեղ չկայ մահացած մարդ, ապա ես հենց այսօր հրաժարական կը տամ»: Զարմանալով հանդերձ այդ տրամաբանութեան վրայ՝ մնում է յիշեցնել, թէ չգիտես ինչու աշխարհում գրեթէ ամենուր ոստիկանութիւնը կարողանում է ճշգրտօրէն հաշուառել, թէ ով է ողջ, ով՝ մեռած, ով ունի ընտրական իրաւունք, իսկ ով՝ ոչ, իսկ մեզանում մէկ տասնեակից աւել ընդդիմադիր կուսակցութիւնների կոկորդ պատռելուց յետոյ միայն մի քանի հարիւր հանգուցեալ են հանում ընտրացուցակներից, բայց միաժամանակ կարելի է վստահաբար ասել, որ Թաղման բիւրոյի ցուցակների առիւծի բաժինը շարունակում է մնալ ընտրացուցակներում: Համ էլ յարգարժան պարոնը մոռանում է, որ այլ երկրներում, եթէ հանգուցեալը յանկարծ պատահմամբ մնայ ընտրացուցակում, ոչ ոքի ուղեղում չի ծնուի զարմանալի միտքը՝ այդ հանգուցեալին գերեզմանից հանել ու ձեռքից բռնած բերել ընտրատեղամաս՝ քուէարկելու: Այդպիսի սիւրռեալիզմ եւ միստիկա օրինակ հարեւան Վրաստանում էլ, երեւի թէ, չկայ, իսկ արեւելեան բռնապետութիւն համարուող Ատրպէյճանում քուէները նկարում են գոնէ առանց մեռելների ներգրաւման:*

*Վերջերս ամէն մի, ժողովրդի լեզուով ասած, «շուն, շան որդի» չգիտես ինչու զարմանալի սովորոյթ է ձեռք բերել բոլոր դատական եւ քննչական մարմինները հեղեղել ազատ մամուլի դէմ բողոքներով: Կարող են նոյնիսկ մի քանի տարուայ վաղեմութեան նիւթը պատրուակ բռնել ու դիմել դատախազութիւն կամ դատարան՝ պահանջելով այս կամ այն թերթին պատժել ինչ-ինչ աներեւակայելի մեղադրանքներով: Եւ, նայելով այդ գործողութիւններին՝ ակամայ յիշում ես հին անեկդոտը այն մարդու մասին, որը գազանանոց այցելելուց յետոյ ծեծում է հինգ տարի առաջ իրեն կոկորդիլոս անուանած հարեւանին՝ պատճառաբանելով. «Ախր նոր տեսայ, թէ կոկորդիլոսը ինչ բեջուռա կենդանի է«: Հենց այդ անեկդոտի հերոսին են յիշեցնում «Շանթ» հեռուստաընկերութեան ղեկավար **ԱՐԹՈՒՐ ԵԶԵԿԵԱՆԸ** ու իրաւապաշտպան կոչեցեալ **ՊՈՒՇԿԻՆ ՍԵՐՈԲԵԱՆԸ**, որոնց դիմումների ու հայցերի հեղեղների պատճառով «Ժամանակ Երեւան» թերթի խմբագրութիւնը վերջերս զարմանալիօրէն աւելի շատ նման է փաստաբանական գրասենեակի, քան ԶԼՄ-ի ու հարկադրուած է զբաղուել պրոֆեսիոնալ գործ տուողների յարձակումները դիմագրաւելով: Զարմանալով հանդերձ վերը յիշատակուած պարոնների պաթոլոգիկ «կլյաուզնիկութեան» վրայ՝ մնում է յիշեցնել, որ այդ նոյն անձինք ոչ պակաս ժամանակ են խլել նաեւ մեզանից:*

*Աչքներս լոյս, վերջերս երգելը իսպառ «թարգած» եւ խոստովանութիւն տուած, որ իր երգելու ժամանակներն անցել են, **ՌՈՒԲԷՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆԸ**, որոշել է դառնալ դաշնակցութեան ջերմ քարոզիչ, ինչից ՀՅԴ ղեկավարներից շատերը գոհ են: Սակայն այդտեղ զարմանալին ոչ թէ այն է, որ տուեալ դէպքում Հախվերդեանի սէրը յանկարծ կպել է ՀՅԴ-ին, այլ նրա վերջին տարիների կերպարանափոխութիւնը: Ախր կոմունիստների օրօք նա հանդէս էր գալիս որպէս ազատութեան երգիչ, նրա ձայնագրութիւնները ճարելը այնքան հեշտ չէր, մարդիկ իրարից էին ձայներից կրկնօրինակում, ու յանկարծ անկախ Հայաստանում նա վերածուեց պալատական երգչի: Մէ՛կ Ռոբերտ Քոչարեանին է գովերգում, մէ՛կ Սերժ Սարգսեանին, հիմա էլ՝ իշխանութեան մաս կազմող դաշնակներին, իսկ երգելու փոխարէն էլ պարզապէս ափռցփռ խօսում է այլ երգիչների, ընդդիմադիր գործիչների ու ազատ մամուլի դէմ՝ յաճախ անցնելով բարեկրթութեան անգամ փողոցային չափանիշների սահմանը:*

*Ընտրարշաւի ընթացքում զարմանալի բաներ յաճախ են պատահում:*

*Այսպէս, թիւ 9 ընտրատարածքում առաջադրուած հանրապետական **ՌՈՒԲԷՆ ՍԱԴՈՅԵԱՆԸ** այն աստիճանի է ուրախացել սեփական դէմքով մեծադիր պաստառներով, որ պաստառների մի մասը զարմանալիօրէն փակցրել է եւ հարեւան ընտրատարածքներում: Ի դէպ, նոյն կերպ վարուել են եւ Գիւմրիում առաջադրուած որոշ թեկնածուներ, եւ տեսնելով այդ դրսեւորումը՝ ակամայ յիշում ես գիւմրեցու այն անեկդոտը, որը պատմում է այնպիսի ճոխ հարսանիքի մասին, ուր հարս ու փեսին երկու-երեք տեղով էին նստեցրել:*

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՋԵԱՆ**
**«ԻՍԿԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ»**

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ
ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ՄԵԿ ՔՈՒԷԻ ԻՐԱԿԱՆ ԳԻՆԸ 4 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ Է

*Շատերն են խօսում այն մասին, որ այս ընտրութիւնների ժամանակ ընտրակաշառքի չափը բաւականին մեծացել է՝ հասնելով 20-40 տոլարի: Իսկ իրականում ի՞նչ արժէ մէկ ձայնը:*

*Ակնյայտ է, որ ե՛ւ կուսակցութիւնների, ե՛ւ անհատ պատգամաւորների մեծ մասը ընտրութիւններն ընկալում են որպէս բիզնես: Այսինքն՝ ներդնում են որոշակի գումար (քարոզչութիւն, ընտրակաշառք եւ այլն), որպէսզի հետագայ հինգ տարիների ընթացքում աւելի շատ գումար վաստակեն (ապօրինի բիզնեսով զբաղուեն, հարկեր թաքցնեն, մի խօսքով՝ թալանեն երկիրը): Եթէ մենք այս ամէնին մօտենանք որպէս բիզնեսի, կարող ենք հեշտութեամբ հաշուել, թէ որն է մէկ քուէի իրական գինը: Բնականաբար, պէտք է հաշուի առնել միայն համամասնական ընտրակարգը, որովհետեւ երկիրն ամբողջապէս թալանել հնարաւոր է միայն խորհրդարանում բացարձակ մեծամասնութիւն (այսինքն՝ բացարձակ իշխանութիւն) ունենալով:*

*Հիմա անցնենք բուն հաշուարկներին: Ամենանուազեցուած թուերով, իշխանութիւններն ու նրանց ենթակայ օլիգարխները ապօրինի վաստակում (այսինքն՝ թալանում) են տարեկան մէկ միլիարդ դոլար: Սրա մէջ մտնում են ե՛ւ ընդերքի շահագործումը (մոլիբդէն, ոսկի), ե՛ւ բենզինի, ու գազի, ցորենի ներկրումը, ե՛ւ արհեստական մենաշնորհները, ե՛ւ դրամի արհեստական արժեւորումից ստացուող գերշահոյթները: Բացարձակապէս որեւէ նշանակութիւն չունի՝ դա անում է մի հոգի՞, թէ՞ մարդկանց մի մեծ խումբ: Բիզնեսը մնում է բիզնես. այն կարող է մի սեփականատէր ունենալ կամ բազմաթիւ բաժնետէրեր:*

*Սա նշանակում է, որ առաջիկայ հինգ տարիներին (Ազգային Ժողովն ընտրուելու է 5 տարի ժամկէտով) Հայաստանում մեծամասնութիւն կազմած ուժը կարող է «վաստակել» առնուազն 5 միլիարդ դոլար: Իսկ ինչպիսի՞ն է Հայաստանում բիզնեսի տարեկան միջին շահութաբերութիւնը: Մասնագէտների գնահատմամբ, եթէ բիզնեսը տարեկան 30-35 տոկոս շահութաբերութիւն է ապահովում, դա համարւում է լաւ բիզնես: Այսինքն՝ տարեկան մէկ միլիարդ դոլար շահոյթ ունենալու համար պէտք է ներդնել 3 միլիարդ դոլար (դրա 30-35 տոկոսն էլ հենց կը կազմի տարեկան մէկ միլիարդը): Պարզ ասած, եթէ որեւէ բիզնեսմեն Հայաստանում ձգտի տարեկան մէկ միլիարդ դոլար շահոյթ ունենալ, պիտի 3 միլիարդ ներդնի:*

*Հիմա անդրադառնանք ընտրութիւններին: Ամենաուռճացուած թուերով, Հայաստանում կայ մօտ մէկուկէս միլիոն ընտրող: Հասկանալի է, որ իրականում ընտրութիւններին երբեք այդքան մարդ չի մասնակցում, բայց մի պահ ենթադրենք, որ բոլորն էլ մասնակցելու են: Այդ դէպքում բացարձակ մեծամասնութիւն ստանալու համար (այսինքն՝ տարեկան մէկ միլիարդ դոլար թալանելու իրաւունքի համար) անհրաժեշտ է ընտրողների ձայների կէսը՝ 750 հազար ձայն: 3 միլիարդը բաժանում ենք 750 հազարի, եւ ստացւում է 4 հազար: Այսինքն՝ մէկ ընտրողի ձայնի իրական գինը, տնտեսագիտութեան բոլոր կանոնների համաձայն, 4 հազար դոլար է:*

*Սա, նորից ենք կրկնում, զուտ տնտեսագիտական հաշուարկ է, եթէ կ՛ուզէք՝ բիզնես-ծրագիր: Այսինքն, եթէ որեւէ մէկը (օրինակ՝ Քըրք Քըրքորեանը) 3 միլիարդ դոլար ծախսի եւ 750 հազար ընտրողներից իւրաքանչիւրին 4 հազար դոլար տա, նա իրաւունք կը ստանայ երկիրը թալանելով տարեկան 30-35 տոկոս շահոյթ ապահովել:*

*Ի՞նչ է ստացւում: Ստացւում է, որ Հայաստանի իշխանութիւնները ոչ միայն Սահմանադրութիւնն են խախտում՝ ընտրակեղծիքներ բաժանելով ու փորձելով գնել ժողովրդի ձայնը, այլեւ տնտեսութեան եւ բիզնեսի օրէնքներն են խախտում՝ ընտրողներին ձայնի դիմաց առաջարկելով այդ ձայնի «իրական գնից» 100-200 անգամ պակաս գումար: Ի դէպ, հարցին կարելի է մօտենալ նաեւ հակառակ կողմից, եւ նոյն արդիւնքը կը ստացուի: Այսինքն, եթէ տարեկան այդ մէկ միլիոն տոլարը չթալանուի եւ մտնի պետբիւջէ, բիւջէն կը կրկնապատկուի: Հետեւաբար՝ առնուազն երկու անգամ կը բարձրանան նաեւ աշխատավարձերն ու թոշակները: Եւ կը ստացուի, որ 5 տարուայ ընթացքում շարքային ընտրողները 100-200 անգամ աւելի շատ գումար կը ստանան, քան այսօր նրանց առաջարկւում է «միանուագ»՝ որպէս ընտրակաշառք:*

*Մի խօսքով, իրականում մէկ քուէի «շուկայական արժէքը» 4 հազար տոլար է:*

**ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ**
**«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

### ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՄԻԱՒՈՐՈՒՄԸ ՁԱԽՈՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ԳԵՂԱՄԵԱՆԻՆ ՈՒ ԴԵՄԻՐՃԵԱՆԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ, նախկին վարչապետ Արամ Սարգսեանը այսօր Վարդենիսում ընտրողների հետ հանդիպման ժամանակ ընդդիմադիր ուժերից Հայաստանի ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ) եւ «Ազգային Միաբանութեան» առաջնորդներին մեղադրեց Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններին միաւորուած ընդդիմութեամբ գնալու ծրագիրը ձախողելու համար:



«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ, Արամ Սարգսեան

«Հենց ընդդիմադիրները դրանք [այդ ծրագրերը] տապալեցին», - յայտարարեց Արամ Սարգսեանը՝ առաջին անգամ հնչեցնելով կոնկրետ անուններ. - «Երբ ասում ես՝ տղերք, եկէք միաւորուենք, գրենք միասնական համամասնական ցուցակ, Գեղամեանն ասում է՝ չէ, միասինը լաւ չէ: Ինչի՞ համար... Որովհետեւ 5 տոկոսի խնդիր է լուծում, որովհետեւ 5 տոկոսի խնդիր լուծելով՝ սորասբուրգներում գնա ելոյթ ունենայ...»:

«Եթէ դուք ձեր մէջ առաջինն-երկրորդի խնդիր ունէք, Ստեփան Դեմիրճեա՚ն եւ Արտաշէս Գեղամեա՚ն, գիր-դուշ գցէք իրար մէջ», - ասաց «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդը:

Պատասխանելով «Իմփեչմենտ» դաշինքի եւ «Նոր ժամանակներ» կուսակցութեան հետ համագործակցութեանը վերաբերող հարցին՝ Արամ Սարգսեանը ասաց, որ Մայիսի 3-ից բոլոր գործողութիւնները համաձայնեցուած են անելու. - «Ամսի 3-ից սկսած բոլոր հանդիպումներն ու այցելութիւնները միասին ենք անելու: Այսօր կարելի է ասել այսքանը. յետոյ ինչ կը ստացուի, ինչ քայլեր կ՚անենք՝ այդ մասով քննարկումներ գնում են»:

### ՀՀՇ-Ն ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայոց Համազգային Շարժման (ՀՀՇ) վարչութիւնը յայտարարեց համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրութիւնների գործընթացից կուսակցութեան դուրս գալու մասին:

«Հայոց Համազգային Շարժումը, գնահատելով Հայաստանում ստեղծուած քաղաքական իրավիճակը, հաշուի առնելով, որ գործող իշխանութիւնները եւս մէկ անգամ ամէն գնով փորձում են վերարտադրուել, ինչը երկրի համար յղի է անկանխատեսելի հետեւանքներով, ի սկզբանէ համոզուած լինելով, որ այս իրավիճակից դուրս գալու միակ ճանապարհն իրական ընդդիմութեան համախմբումն է, վստահ լինելով, որ ընդդիմութեան ոչ միասնական մասնակցութիւնն ընտրական գործընթացին անհնար է դարձնելու իշխանափոխութիւնը, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովում տեղեր զբաղեցնելը չհամարելով ինքնանպատակ, յայտարարում է, որ դուրս է գալիս համամասնական ընտրակարգով քուէարկութեան գործընթացից՝ նպատակ ունենալով նպաստել ընդդիմադիր ընտրազանգուածի համախմբմանը», - ասուած է կուսակցութեան վարչութեան՝ շաբաթ երեկոյեան տարածած յայտարարութիւնում:

ՀՀՇ-ն, համոզմունք յայտնելով, որ «միայն իրական ընդդիմութեան համախմբումով է հնարաւոր դիմակայել երկրին ուղղուած ներքին եւ արտաքին մարտահրաւէրներին», եւ Հայաստանի Հանրապետութիւնում օրինական իշխանութեան հաստատումը համարելով գերխնդիր՝ իր անդամներին եւ համակիրներին կոչ է անում ակտիվօրէն մասնակցել ընտրական գործընթացին եւ քուէարկել «այն քաղաքական ուժերի օգտին, որոնց համար առաջնահերթութիւն են իշխանափոխութիւնը, ազատականութիւնը, ժողովրդավարութիւնը եւ իրատեսական քաղաքականութիւնը»:

ՀՀՇ-ի վարչութեան անդամ Արամ Մանուկեանը, «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում մեկնաբանելով կուսակցութեան որոշումը, մասնաւորապէս, ասաց. - «Ընդդիմութիւնը ընտրութիւններին մասնակցում է տարբեր ֆորմատներով, տարբեր ուժերով, ոչ համախմբուած: Ցաւօք սրտի, չկայացաւ մեծ ֆորմատ, միասնական պայքարի ճակատ, եւ մենք համոզուած ենք, որ պայքարի այսպիսի տարանջատուած՝ բաժան-բաժան ձեւը յաջողութիւն չի կարող բերել, եւ իշխանութիւնը կարող է դուրս գալ յաղթանակած: Ուստի, մենք՝ որպէս օրինակ, որպէս նախաձեռնող, ընդդիմադիր ուժերին կոչ անելու, միասնականացնելու առումով, փորձում ենք օրինակ ծառայել՝ դաշտում թողնելով մէկ կամ մի քանի ընդդիմադիր ուժ, որոնք կ՚ունենան աջակցութիւնը այլ ընդդիմադիրների, եւ միայն այդ դէպքում կարող են լուրջ ճակատ հանդիսանալ իշխանափոխութեան համար»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ հնարաւո՞ր է արդեօք, որ քարոզարշաւի առաջին երեք շաբաթների ընթացքում ՀՀՇ-ն ընտրողների հետ հանդիպումներից տպաւորութիւն է ստացել, թէ չի ստանայ բաւարար քուէ, Մանուկեանը պատասխանեց. - «Ամենաշատը ես եմ հանդիպել ժողովրդի հետ այս երեք շաբաթների ընթացքում: Ես անձամբ 2 հազար դուռ եմ թակել եւ խօսել բնակիչների հետ: Հաւատացնում եմ, որ ՀՀՇ-ի տոկոսը շատ բարձր է այն ֆոնից, ինչ երեւում է հասարակութեան մէջ, եւ ունի աճի տենդենց: Բացի այդ, մենք անցկացրել ենք լրիւ չէզոք՝ զուտ մեզ համար, աշխատանքային եւ լայն սոցիոլոգիական հարցումներ, որոնք բաւական յուսադրող թուեր են տալիս»:

### ԲԱ ԱՄՕԹ ՉԻ՞

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ: Աւանում կայացած հանրահաւաքի ժամանակ «Հանրապետութեան» առաջնորդ Արամ Սարգսեանը ասել է, որ երբ լսում ես մասնաւորապէս Դաշնակցութեանը, մտածում ես՝ այ մարդ, ես ի՞նչ ընդդիմադիր, ընդդիմադիրը սրանք են:

«Ասում են՝ 11 ձայն ունենք, հետեւաբար պատասխանատու չենք ոչ մի բանի համար: Զհասկացայ, բա էդ ոլորտները, որ վերցրել էք, բա ո՞վ է դրանց համար պատասխանատու: Բա ո՞վ էր քուէարկում Քոչարեանի օգտին»,- ասել է Սարգսեանը: Յետոյ յիշեցրել է, որ ՀՅԴ ղեկավարներից մէկը յայտարարել է, թէ 300 զոհ են տուել Ղարաբաղեան պատերազմում: «Հիմա մենք ասենք, որ 6 հազար զո՞հ ենք տուել, Եռաբլուրը վկայ: Ընկեր Հրանդ, էս ի՞նչ ես ասում: 300-ը 5 տոկո՞ս է: 5 տոկո՞ս ես մուրում էդ գնով: Բա ամօթ չի՞»,- նշել է Սարգսեանը:

### ԵՐԵՒԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՎԵՐ ԿԸ ԽՈՅԱՆԱՆ 40 ՅԱՐԿԱՆԻ ՇԷՆՔԵՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Առաջարկութիւն կայ, որ Երեւանի կենտրոնում բարձրանան 30-40 յարկանի շէնքեր, իսկ ազատուող տարածքները պէտք է կանաչապատուեն: «Վերջին տարիների փորձը ցոյց է տալիս, որ բարձրայարկ շէնքերը կառուցւում են, մեքենաներն աւելի շատ են ներգրաւում դէպի կենտրոն, իսկ կանաչապատումը չի իրականացուի»,- իր մտահոգութիւնը «Ա1+»-ին յայտնեց Միջազգային Էկոլոգիական Ակադեմիայի իսկական անդամ Կարինէ Դանիէլեանը:

Երեւանում 30-40 յարկանի բարձրայարկեր կառուցելու առաջարկն ընդգրկուած է Երեւանի գօտիաւորման նախագծում: Երեւանի գլխաւոր յատակագծի հիման վրայ Երեւանի քաղաքապետարանն իրականացնում է մայրաքաղաքի գօտիաւորման գործընթացը: Այսինքն՝ Երեւանը պէտք է կառուցապատուի, անհրաժեշտ է յստակեցնել, թէ որտեղ պէտք է լինի կանաչ գօտի, որտեղ իրականացուի շինարարութիւն, ինչ բարձրութեան եւ խտութեան պէտք է լինեն շէնքերը եւ այլն: Երեւանի քաղաքապետի որոշմամբ ստեղծուել է համապատասխան խումբ՝ Երեւանի գօտիաւորման գործընթացն աւելի մանրամասն ուսումնասիրելու համար: Տիկին Դանիէլեանին նոյնպէս խնդրել են ընդգրկուել այդ խմբում:

«Հիմնական խնդիրն այն է, որ քաղաքում արդէն առկայ խնդիրները վստահութիւն չեն ներշնչում, որ գլխաւոր յատակագծում նշուած կանաչապատումը կ՚իրականացուի»,- կարծում է Կարինէ Դանիէլեանը: Նա նկատում է, որ Երեւանի գօտիաւորմանը զուգահեռ երկու գործընթաց է սկսուելու՝ քաղաքի ցածրայարկ շէնքերի տարածքները պէտք է վերակառուցուեն բարձրայարկ շէնքերով:

### «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԱՒԱԽՔԸ» ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Միասնական Ջաւախք» ժողովրդավարական դաշինքը խստագոյնս դատապարտում է Վրաստանի իրաւապահ մարմինների կողմից Ապրիլի 24-ին տեղի ունեցած Դաշինքի անդամներ Արթուր Պօղոսեանի եւ Ախալքալաքի նախկին քաղաքապետ Նաիրի Իրիցեանի ապօրինի ձերբակալութիւններն՝ անհիմն եւ շինծու մեղադրանքներով:

«Արթուր Պօղոսեանի եւ Նաիրի Իրիցեանի գիշերային ձերբակալութիւնները, մեղադրեալների շուտափոյթ տեղափոխութիւնն էթնիկապէս «ապահով» համարուող Ախալցխան եւ քիչ անց Արթուր Պօղոսեանի փոխադրումը Թբիլիսին վկայում են, որ Վրաստանի իշխանութիւններն ազգային փոքրամասնութիւնների եւ, մասնաւորապէս, Ջաւախահայութեան ազգային եւ քաղաքացիական իրաւունքները յարգելու հարցում մտադիր չեն առաջնորդուելու սահմանադրօրէն ամրագրուած օրինականութեան եւ միջազգայնօրէն ստանձնուած պարտաւորութիւնների պահանջներով:

Ջաւախքում եւ ներկայիս Վրաստանի ողջ տարածքում մոլեգնող հակաժողովրդավարական եւ քաղաքական ցանկացած այլակարծութեանն անհաշտ, ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ համահասարակական անհանդուրժողականութիւնը սերմանող Թբիլիսեան այժմեայ վարչակարգը պէտք է քաջ գիտակցի նման քաղաքականութեան կործանարար հետեւանքները՝ երկրի միջազգային վարկի, նրա քաղաքացիների բարօրութեան, անվտանգութեան եւ տարածաշրջանային կայունութեան համար»,- ասուած է «Միասնական Ջաւախք» ժողովրդավարական դաշինքի այսօր տարածած յայտարարութեան մէջ. «Դաշինքը կրկին դատապարտում է Ջաւախահայութեան իրաւունքների զանգուածային ոտնահարման, ուժային ապօրինի եւ սադրիչ գործողութիւններով բնակչութեանն ահաբեկելու եւ վարչակարգի կողմից «չվերահսկուող» քաղաքական գործիչներին անհիմն եւ ակնբախօրէն անհեթեթ մեղադրանքներով ձերբակալելու Թբիլիսեան իշխանութիւնների քաղաքականութիւնը, որն արդէն իսկ կանգնեցրել է Ջաւախահայութեանն անցանկալի հետեւանքներով յղի համընդհանուր ըմբոստութեան շեմին»:

Դաշինքն ամենայն վճռականութեամբ պահանջում է անյապաղ ազատ արձակել Թբիլիսիի քննչական մեկուսարաններից մէկում ապօրինաբար պահուող Դաշինքի անդամ եւ նուիրեալ Ջաւախահայ Արթուր Պօղոսեանին, կարճել նրա եւ միւս Ջաւախահայ գործիչների նկատմամբ յարուցուած անհեթեթ քրէական գործերը եւ դադարեցնել երկրամասի հայութեան խորացող ահաբեկումն՝ ուժային կառոյցների սադրիչ ներգրաւուածութեամբ:

Դաշինքը տեղեակ է պահում հանրութեանը, որ Ջաւախահայութեան արդար եւ համընդհանուր վճռականութեանը հակազդելու, ապօրինաբար ձերբակալուած անձանց անյապաղ ազատ չարձակելու, լեզուական ու կրօնական անվիճարկելի իրաւունքները ոտնահարել շարունակելու պարագայում, իրավիճակի ապակայունացման ողջ պատասխանատուութիւնը կ՚ընկնի երկրի կենտրոնական իշխանութիւնների եւ Ջաւախքում ծուարած վերջիններիս կամակատար անձանց վրայ:

## ԼՈՒՐԵՐ

## ԲՈՐԻՍ ՖՐԼԵՑ. «ԱՅՍ ՓՈՒԼՈՒՄ ՊԱՀԱՆՋՒՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԽԻՂՃ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ»



Դիտորդական առաքելութեան ղեկավար, դեսպան Բորիս Ֆրլեց

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՈՅ»: Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Ժողովրդավարական Հաստատութիւնների եւ Մարդու Իրաւունքների Գրասենեակի (ԺՀՄԻԳ) դիտորդական առաքելութեան ղեկավար, դեսպան Բորիս Ֆրլեցը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ բացառիկ հարցազրոյցում համոզմունք յայտնեց, որ «ազատ եւ արդար ընտրութիւնների համար Հայաստանում կայ իրաւական դաշտ». - «Այս փուլում միայն պահանջւում է օրէնսդրութեան բարեխիղճ իրագործում»:

Երկարաժամկէտ դիտորդական առաքելութեան երկրորդ միջանկեալ զեկոյցը հրապարակուել է: Զեկոյցում գնահատականներ չեն տրւում՝ սոսկ նկարագրուած է իրավիճակը:

«Ընտրական օրէնսգիրքը ուղղակիօրէն չի արտայայտում, թէ արդեօ՞ք թոյլատրւում է ընտրութիւնների մասնակիցների կողմից քարոզչական միջոցառումների անցկացումը նախքան ընտրութիւնները», - գրում են զեկոյցի հեղինակները՝ նշելով «Բարգաւաճ Հայաստան»-ի կողմից ակնյայտ քարոզչութիւն կազմող նիւթերը՝ փողոցային վահանակների տեսքով, որոնք տեղադրուած են եղել մինչեւ քարոզարշաւի պաշտօնական մեկնարկը:

Դիտարկուել է նաեւ լրատուական դաշտը. - «Երկրի տարածքով հեռարձակուող հեռուստաալիքների քարոզչական գովազդի սակագները, ըստ երեւոյթին, բարձր են... Քաղաքական ուժերի զգալի մասն իրենց մտահոգութիւնն է բարձրացրել՝ մատնանշելով, որ արգելք ստեղծող բարձր գները թոյլ են տալիս միայն սահմանափակ կերպով օգտուել քարոզչութեան այս եղանակից»:

Մոնիթորինգի ենթարկուած լրատուութեան լուսաբանումը ընդհանուր առմամբ բնութագրուել է որպէս «կառավարութեան գործունէութեան լայնածաւալ լուսաբանում»: «Կենտրոն» հեռուստաընկերութիւնը ցուցաբերել է «յստակ նախապատուութիւն «Բարգաւաճ Հայաստան»-ի նկատմամբ», Հանրային հեռուստաընկերութիւնը կառավարութեանը տրամադրել է իր քաղաքական «պրայմ թայմի» լրատուական լուսաբանման 43 տոկոսը: Հ2-ը կառավարութեանը յատկացրել է մոնիթորինգի ենթարկուած լուսաբանման 57 տոկոսը:

Հարցին, թէ նկատե՞լ է արդեօք, որ ժողովուրդը վախեցած է (ինչպէս պնդում են ընդդիմադիրները), Ֆրլեցը պատասխանեց. - «Ես երախտապարտ կը լինէի, որ այդ յայտարարութիւնները նիւթական տեսք ստանային եւ բողոքների, նամակների միջոցով հասնէին մեզ, որպէսզի մենք արձանագրէինք: Բայց դրանք մեզ չեն հասել, եւ անեկդոտները մթնոլորտի նման այնպիսի բաներ են, որ չես կարող բռնել: Դրանք նիւթական չեն»:

Արթուր Բաղդասարեանի եւ Հայաստանում Մեծ Բրիտանիայի փոխդեսպանի գաղտնալսուած զրոյցի հրապարակման մասին Բորիս Ֆրլեցը ասաց, որ դրան կ'անդրադառնան իրենց յաջորդ զեկոյցում:

Իսկ Ռոբերդ Քոչարեանի գնահատականի վերաբերեալ, թէ՝ Բաղդասարեանի արածը դաւաճանութիւն է, դիտորդական առաքելութեան ղեկավարը ասաց. - «Եթէ հանդիպումն արգելուէր, երկիրը ժողովրդավարական չէր լինի: Բնական է, որ դիւանագիտական ներկայացուցչութիւնները հանդիպէն կուսակցութիւնների հետ, իրենց կարծիքը կազմեն կատարուող իրադարձութիւնների մասին: Բայց ես խօսում եմ մեթոդի մասին. դա պէտք է թոյլատրելի լինի: Խօսքը բովանդակութեան մասին չէ»:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԿԷՍԸ ՕՐԱԿԱՆ ԾԱԽՍՈՒՄ Է 2 ԴՈԼԱՐԻՑ ՊԱԿԱՍ

ՄԱԿ-ի երեք գործակալութիւնները՝ Մանկական հիմնադրամը (UNICEF), Զարգացման ծրագիրը (UNDP) եւ Եւրոպայի գծով Տնտեսական յանձնաժողովը (UN Economic Commission for Europe) հրապարակել են համատեղ զեկոյց, որի համաձայն, միլիոնաւոր մարդիկ Արեւելեան Եւրոպայում եւ Կենտրոնական Ասիայում հազիւ են ծայրը ծայրին հասցնում:

Ըստ զեկոյցի, չնայած տնտեսական տպաւորիչ աճին, Հայաստանի, Վրաստանի, Ուզբեկստանի, Ղրղըզստանի եւ Տաջիկստանի բնակչութեան կէսն օրական կարող է ծախսել 2 դոլարից պակաս գումար:

Թշուառութեան պայմաններում նախեւառաջ տուժում են երեխաները: ՄԱԿ-ի փորձագէտների կարծիքով, Տաջիկստանում եւ Ալբանիայում իրավիճակը աղքատ երեխաների վիճակագրութեան տեսակէտից կարելի է համեմատել աշխարհի ամենայետամնաց երկրներում առկայ կացութեան հետ:

Արեւելեան Եւրոպայում, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ամէն տարի մահանում է մինչեւ 5 տարեկան շուրջ 212 հազար երեխայ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

## ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՐԹՈՎ ՆՇԵՑ ՄԱՅԻՍԻ 1-Ը


Տեսարան մը Հայաստանի կոմունիստներու Մայիս 1-եան ցոյցէն

Հայաստանի կոմունիստական կուսակցութեան մօտ 2 հազար կողմնակիցներ այսօր երթով եւ հանրահաւաքով նշեցին մայիսմէկեան տօնը:

Երթը, որի մասնակիցների թւում քիչ չէին մարզերից եկածները եւ պատանի պիոներները, սկսուեց Ազգային Օպերայի շէնքից: Հայկոմկուսի ղեկավար Ռուբէն Թովմասեանի գլխաւորութեամբ երթի մասնակիցները, որոնցից շատերը տանում էին դրօշներ ու ցուցապաստառներ, Մաշտոցի պողոտայով եւ Ամիրեան փողոցով շարժուեցին դէպի Շահումեանի հրապարակ:

«Բոլորին կոչ եմ անում Մայիսի 12-ին լինել կոմունիստական կուսակցութեան հետ», - ասում էր կուսակցութեան առաջնորդ Ռուբէն Թովմասեանը՝ հաւաստիացնելով. - «Դրանով կը փրկէք մեր հայրենիքը, հայ ժողովրդի ճակատագիրը»:

Նա մարդկանց զգուշացնում էր, որ եթէ առաջիկայ ընտրութիւններն էլ անցնեն 2003-ի ընտրութիւնների պէս, ապա «Հայաստանը եւ նրա սերունդը դառնալու է օտարների ծառայ, եւ ամբողջ ժողովուրդը ստրկանալու է»:

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ.- «ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԴԱՇՏԸ ԱԿԱՆԱԶԵՐԾՒՈՒՄ Է»

«ՀԺԿ-ն այլեւս չի կարող լինել ընդդիմութիւն, որովհետեւ նա 2003 թուականից պէտք է լինէր իշխանութիւն. եթէ նա այլեւս ընդդիմութիւն չէ, ու իշխանութիւն էլ չէ, ուրեմն ոչինչ է»,- «Ա1+»-ին տուած հարցազրոյցում ասաց «Իմպիչմենտ» դաշինքի համամասնական ցուցակում առաջին հորիզոնականը զբաղեցնող Նիկոլ Փաշինեանը:

Ըստ նրա՝ «2003թ ոչ մէկը ՀԺԿ-ին չէր խանգարում իշխանութիւնը վերցնել. մենք բոլորս, այդ թւում նաեւ ես, որպէս շարքային ցուցարար, կանգնած էինք ձեան, անձրեւի, ցեխի, մահակների, ջրցան մեքենաների տակ, մենք իրենց լիազօրել էինք՝ գնալ եւ վերցնել իշխանութիւնը, ինչո՞ւ չվերցրին»: Մեր դիտարկմանը՝ արհինահեղութիւնից խուսափելու համար, պատասխանում. «Ի՞նչ արիւն, դրանք հեքիաթներ են, ամբողջ ժողովուրդը ոտքի էր կանգնած, էդ ո՞ր ոստիկանը կը կրակէր, կարո՞ղ է էդ ոստիկանը օդից էր եկել, նա էլ սովորական քաղաքացի է, չէ՞»:

«Իմպիչմենտն» ի տարբերութիւն «Արդարութեան», պատրաստակամ է մինչեւ վերջ պայքարել, մինչեւ երկրում համակարգային փոփոխութիւնների հասնելը. «Եթէ մենք ստանանք մանդատներ եւ պարզուի, որ այդ մանդատները բաւարար չեն այս իշխանութիւններին իմպիչմենտի ենթարկելու համար, ուրեմն մենք պէտք է վերադառնանք հրապարակ, քանի դեռ այս իշխանութեանը իմպիչմենտի չենք ենթարկել»:

Այդ թւում մանդատները վայր դնելո՞ւ գնով՝ մեր հարցին Նիկոլ Փաշինեանը դրական պատասխանեց. «Նաեւ մանդատները դնելով: Խնդիրները մինչեւ չլուծուեն, մեր պայքարը չի աւարտուելու: Մենք հռչակել ենք խնդիր, եւ այդ խնդիրը պէտք է լուծուի, թէ ինչ տեղի կ'ունենայ, ինչ ձեւաչափով, ում հետ կը լուծուի, դա այլ հարց է, բայց քանի դեռ խնդիրը լուծուած չի, մենք կանգառ չունենք»:

Նիկոլ Փաշինեանի գնահատմամբ այսօր ընդդիմադիր դաշտում շատ կարեւոր պրոցէս է տեղի ունենում, զատման պրոցէս. «Արդէն 7-8 տարի քաղաքական դաշտ են ներմուծուել կեղծ ընդդիմադիր, ընդդիմադիր «ական» հասկացութիւնները. ես կարծում եմ, որ այս ընտրութիւնները կարեւոր են լինելու քաղաքական դաշտի ականազերծման իմաստով»: Իսկ ինչո՞ւ 2003-ի ընտրութիւնները չականազերծեցին դաշտը՝ մեր հարցին, նա պատասխանեց.

«Որովհետեւ ականազերծման համար հարկաւոր է այլընտրանքային, նոր ձեւաչափ, երբ մարդ ընտրութեան հնարաւորութիւն ունենայ, ես կարծում եմ, որ «Հանրապետութեան», «Նոր ժամանակների» եւ մեր համագործակցութիւնը ընտրութեան հնարաւորութիւն մարդկանց կ'ընձեռի: Մարդիկ 2003-ին շատ բան հասկանալով չէին տեսնում ուրիշ ընդդիմութիւն, հիմա սկսել են ուրիշ ընդդիմութիւն տեսնել, ու հիմա կը վստահեն այս ընդդիմութեանը, իսկ ովքեր ական են ընդդիմադիր դաշտում կամ կը տեղաւորուեն յստակ ընդդիմադիր կոնտեքստում, կամ դուրս մնան քաղաքական պրոցէսից»:

Յիշեցնենք, որ բացի

Շար.ը էջ 5

**ՏԵՍԱԿԷՏ**

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՕՀԱՆ ԴՈՒՐԵԱՆԻ ՀԵՏ
# ԴԵՌ ՈՒՇ ՉԷ՝ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրեանը երկարատեւ լռութիւնից յետոյ առաջին հարցազրոյցն է տուել «Հայկական Ժամանակին»:*

*Մաեստրոն առաջին մտաւորականն էր, որ դեռ տարիներ առաջ դէմ խօսեց գործող իշխանութիւններին եւ, որպէս բողոքի նշան այս իշխանութիւնների վարած քաղաքականութեան, Ռ. Քոչարեանին վերադարձրեց իր ստացած բոլոր պետական պարգեւները: 2003-ին դիրիժորը շատ ակտիւօրէն մասնակցում էր ընդդիմութեան հանրահաւաքներին եւ կանգնած էր ժողովրդի կողքին: Ի՞նչ է այսօր մտածում, ասում եւ անում սիրելի մաեստրոն:*

- Մաեստրո, դուք միշտ ակտիվ էք եղել նաեւ քաղաքականապէս եւ միշտ եղել էք ընդդիմադիր: Յիմա հետեւո՞ւմ էք քաղաքական գործընթացներին, որեւէ բան փոխուե՞լ է ձեր քաղաքական հայեացքների մէջ:

*- Այսօր էլ ես ընդդիմադիր եմ եւ աւելի ընդդիմադիր եմ, քան առաջ, որովհետեւ որեւէ լոյս եւ հեռանկար ժողովրդի համար չեմ տեսնում: Ո՞ր մի կարեւոր հարցը լուծուեց ազգիս համար: Եթէ մտաւորական ես եւ խիղճ ունես, չես կարող այսօր ընդդիմադիր չլինել: Դժբախտաբար, ընդդի-մութեան դաշտում եղան մարդիկ, որ գնացին դաւաճանութեան, շատ վատ ձեւով: Գնացին, էլի իշխանութեան գիրկն ընկան ողորմելի մի քանի տոկոսի համար: Մանաւանդ խօսքս ուղղում եմ Ստեփան Դեմիրճեանին: Ո՞վ, սիրելի Ստեփան, ո՞վ էր, որ 1998-ին Կարէն Դեմիրճեանի ձայները գողացաւ եւ ինքն իրեն հռչակեց նախագահ: Ինչո՞ւ 1-2 տարի յետոյ սպաննուեց Կարէն Դեմիրճեանը: Սիրելի Ստեփան, ո՞վ էր, որ 2003-ին 150 հազ. մարդ ունէր իր հետեւում, եւ այսօր դրանցից քանի՞սը մնացին: 2003-ին, երբ պիտի արդէն յաղթէիր, ո՞վ էր, որ այդ ժամանակ էլ քո ձայները գողացաւ եւ իրեն հռչակեց նախագահ: Ո՞վ էր: Եւ հիմա թողնում ես ընդդիմութիւնը եւ գնում ես, նրա գիրկն ես ընկնում: Դա ներելի բան չէ: Ես քո հօր տեղը լինէի, ես չէի ների քեզ: Բայց հիմա քեզ ասում եմ, որ ուշ չէ: Եթէ ուզում ես ուղղել քո սխալը, միացիր իսկական ընդդիմութեանը: Դա է քո միակ շանսը: Եթէ դու միանաս նրանց, Կարէն Դեմիրճեանը քեզ կը ների: Կամ՝ ինչպէ՞ս այդքան բանից յետոյ թոյլ տուեցիր, որ Կարէն Դեմիրճեանի թանգարանը բացի Սերժ Սարգսեանը, ու յետոյ էլ գերդաստանով շնորհակալութիւն յայտնեցիք իրենց:*

- Մաեստրո, մենք տեղեակ ենք նաեւ, որ երբ նախընտրական ընդդիմադիր դաշինք պէտք է ձեւաւորուէր, դուք հանդիպել էք ընդդիմադիր մի քանի առաջնորդների հետ եւ յորդորել էք նրանց միաւորուել:

*- Նրանք բոլորն էլ խոստանում էին, որ կը միաւորուեն, բայց դա տեղի չունեցաւ: Ես ուզում եմ, որ «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանն էլ այս կոչը լսի եւ միանայ իսկական ընդդիմութեանը, ինչպէս որ խոստացել էր ինձ: Ես ուզում եմ նրանց հիմա ասել, որ դուք ոչ թէ ընդդիմութիւն էք, այլ իշխանամէտ ընդդիմութիւն էք: Ամօ՛թ է: Ամօ՛թ:*



*Ծախուած էք 5-6%-ի համար: Եւ ընտրակեղծիքներ լինելու դէպքում, այն բոլոր ընդդիմադիր ուժերը, որոնք դուրս չեկան փողոց եւ չպայքարեցին յանուն արդարութեան՝ երկրի իրավիճակը փոխելու, նրանք բոլորը ծախուած են իշխանութիւններին, գործարքի մէջ են իշխանութիւնների հետ: Ամօ՛թ իրենց: Միաժամանակ նրանք իրենց քաղաքական մահկանացուն կը կնքեն: Ժողովուրդն այս ամէնը լաւ տեսնում է:*

- Բայց ժողովուրդն այսօր կարծես քաղաքականապէս պասիւ է: Ի՞նչ կոչ կ'անէք ժողովրդին:

*- Իմ կոչը շատ պարզ է: Միակ ելքը, որպէսզի իշխանութեանը, իշխանութեան գլուխ կանգնած թալանչիներին հեռացնենք, հետեւեալն է՝ միանալ ընդդիմութեանը եւ գնալ դէպի դեմոկրատական յեղափոխութիւն: Այս է իմ ասելիքը: Իրավիճակը փոխելու եւ այս ամենից ազատուելու միակ ելքը դեմոկրատական յեղափոխութիւնն է: Ուրիշ ելք չունենք: Ինչո՞ւ: Որովհետեւ այս իշխանութիւնները, ոչ ոք չի հաւատայ, նոյնիսկ իրենք էլ չեն հաւատայ, որ կարող են փոքր-ինչ ազատ, արդար ընտրութիւններ անցկացնել: Իսկ կեղծիքների դէպքում մնում է միայն 1 ճանապարհ՝ ելնել դեմոկրատական յեղափոխութեան: Այս օրերին հետեւելով քաղաքական անցուդարձին՝ ես, եւ համոզուած եմ նաեւ ժողովուրդը, եկայ այն համոզման, թէ ով է իրական ընդդիմութիւնը: Դրանք այն ուժերն են, որոնք պայքարում են ոչ թէ մանդատ ստանալու եւ խորհրդարանի մէջ յայտնուելու համար, այլ իսկապէս իրավիճակը երկրում փոխելու համար, ժողովրդի կեանքը հիմնովին բարելաւելու համար: Այդ ուժերն են «Հանրապետութիւն» կուսակցութիւնը՝ Արամ Սարգսեանի գլխաւորութեամբ, որին միշտ վստահել եմ եւ վստահում եմ, «Նոր ժամանակներ» կուսակցութիւնը՝ Արամ Կարապետեանի գլխաւորութեամբ, որի սկզբունքային, վճռական պայքարը ինձ շատ ուրախացրեց այս անգամ, եւ իհարկէ, յայտնութիւն էր ինձ համար Նիկոլ Փաշինեանի եւ Վահագն Խաչատրեանի բուռն, ակտիվ քարոզարշաւը ամէն մի թաղամասում, ամէն մի փողոցում: Իսկ ո՞ւր են մնացածները՝ Րաֆֆի Յովհաննիսեանը, Ստեփան Դեմիրճեանը: Ես յուսով եմ, որ նրանք չեն լինելու 5 տոկոսի համար ծախուած իշխանամէտ ընդդիմադիրներ: Եւ դարձեալ ասում եմ, որ ուշ չէ, որպէսզի միանան իրական ընդդիմութեանը:*

- Այսօր հայ երգիչները բաժանուել են 2 մասի եւ իշխանական երկու կուսակցութիւնների՝ «Բարգաւաճ Յայաստանի» ու Յանրապետականի գովքն են անում հանրապետութեան տարբեր մարզերում: Ինչպէ՞ս էք վերաբերւում այդ երգիչներին եւ այդ երեւոյթին ընդհանրապէս:

*- Կարեւոր չէ, որ նրանք անպայման ընդդիմադիր լինեն, կարեւորը, որ նրանք ունենան գաղափարներ եւ սկզբունքներ, իսկական արուեստագէտի կեցուածք: Եթէ նրանք չունեն այդպիսի կեցուածք, ամէն մի կոպեկի համար կը ծախուեն, դժբախտաբար: Ջեմ մեղադրում եւ չեմ զարմանում, որ նրանք ծախւում են, որովհետեւ իրենք արուեստագէտի կեցուածք չունեն: Խախուտ գործիք են:*

- Ու չէք կարծո՞ւմ, որ իրենց այսօրուայ վիճակի համար մեղաւոր են հենց իրենք:

*- Իրենք այսօր իրենց այդ կեցուածքով շատ մեծ վատութիւն են անում ամբողջ հայ ազգին՝ միանալով իշխանութեանը: Եւ դա իրենք շատ լաւ գիտեն: Շատ հեշտ է գնալ եւ կանգնել իշխանութեան կողքին: Աւելի դժուար է լինել օբիեկտիւ եւ պաշտպանել իրական ընդդիմութեանը, ժողովրդի շահերը պաշտպանել:*

- Մաեստրո, վաղը Ազատութեան հրապարակում կայանալու է ընդդիմադիր երեք ուժերի՝ «Յանրապետութիւն», «Նոր ժամանակներ» կուսակցութիւնների եւ «Իմպիչմենտ» դաշինքի համատեղ առաջին հանրահաւաքը: Յնարաւո՞ր է, որ մասնակցէք այդ հանրահաւաքին:

*- Այո, շատ հնարաւոր է: Եթէ առողջութիւնս թոյլ տա, եւ եղանակը նորմալ լինի, ես կ'ուզեմ իմ խօսքն ասել իմ սիրելի ժողովրդին եւ խանդավառուել՝ բազմահազար ժողովրդիս տեսնելով, ու շատ կարօտել եմ ժողովրդիս:*

*ԼՈՒՍԻՆԷ ԲԱՐՍԵՂԵԱՆ*

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ.- «ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԴԱՇՏԸ ԱԿԱՆԱՋԵՐԾՒՈՒՄ Է»

*Շարունակուած էջ 4-էն*

*«Այլընտրանքից» եւ «Հանրապետութիւնը», եւ «Նոր ժամանակները» նախորդ ընտրութիւններում բաւականին ակտիվ էին, այսինքն՝ գոյութիւն ունէին, եւ միայն այսօր չեն քաղաքական դաշտում յայտնուել: Նիկոլ Փաշինեանը նկատում է, որ 2003-ի ընդդիմութեան մէջ չէր տեսնում աշխարհայեացքային տարբերութիւններ. «Ընդդիմութիւն չի նշանակում Սերժ Սարգսեանին եւ Ռոբերդ Քոչարեանին հայհոյել, ընդդիմութիւն նշանակում է ունենալ իշխանական աշխարհայեացքից տարբեր աշխարհայեացք, իսկ ես, ճիշդն ասած, չեմ տեսնում այդ տարբերութիւնը, դեկլարատիւ բառերով ասում են ազատութիւն, անկախութիւն, բոլորն էլ ասում են, ինչի՞ հետ համաձայն չեն, արտաքին քաղաքականութեան եւ ներքին քաղաքականութեան առումով ի՞նչն է անընդունելի»: Երբ հարցրինք Նիկոլ Փաշինեանին, թէ արդեօ՞ք աշխարհայեացքային նմանութիւններ ունի «Այլընտրանքը» «Նոր ժամանակների» հետ, նա պատասխանեց. «Աշխարհայեացքը ո՞րն է, մեր համագործակցութիւնը հետեւեալի շուրջն է. մենք ասում ենք, որ Հայաստանի քաղաքացին պէտք է որոշի Հայաստանի իշխանութեանը, ու մենք չենք կարող խորհրդարանական ընտրութիւններին մասնակցել այլ նպատակով, քան այս իշխանութիւններին ամբողջութեամբ հեռացնելն է»:*

*Իսկ համագործակցութիւնը չի սահմանափակուելու այդ երեք քաղաքական ուժով, այն ուժերը, ովքեր խորհրդարան չեն գնում օրէնք փոխելու, այլ նպատակ ունեն իշխանութիւններին հեռացնել, համակարգը փոխել. «Այսինքն, բոլոր նրանք, ովքեր չեն ասում, որ այս ընտրութիւններին մասնակցում են այդ համակարգը, քրէածին օլիգարխիկ այդ համակարգը արմատախիլ անելու համար եւ նրանք այդ խնդիրը չեն դիտում առաջնային, պէտք չի վստահել նրանց»: Իսկ հարցին, թէ ինչո՞ւ այդ երեք ուժերի միաւորումը աւելի վաղ չստացուեց, նա պատասխանեց. «Միաւորման, համագործակցութեան պրոցէսը ինքնաբուխ է ստացուել. հասարակական կարծիքը, մարդկանց դիրքորոշումներն են բերել սրան. տեղի է ունեցել բնական համագործակցութիւն, մենք ի սկզբանէ չենք բանակցել»:*

*Ի դէպ, Արթուր Բաղդասարեանի գաղտնալսման խնդրի մասին մեր հարցին, Նիկոլ Փաշինեանը պատասխանեց. «Ինձ համար շատ տհաճ է, որ մեր երկրում ժուչոկների մթնոլորտ է տիրում, բոլորը բոլորին լսում են, կոմպրոմատներ են հաւաքում եւ օգտագործում միմեանց դէմ»: Իսկ ինչ վերաբերում է Արթուր Բաղդասարեանի՝ արտասահմանցի դիւանագէտի հետ զրոյցին, ապա նախ Փաշինեանը վստահ չէ, որ չի աղաւաղուած Բաղդասարեանի խօսքերը, բայց այնուամենայնիւ, նկատում է. «Հայաստանի հարցերը կարող են եւ պէտք է լուծեն միայն Հայաստանի քաղաքացիները, որովհետեւ միայն Հայաստանի քաղաքացին կարող է շահագրգիռ լինել, որ Հայաստանը լինի ապրելու համար պիտանի երկիր, մնացածները Հայաստանին նայում են իրենց շահերի պրիզմայով, մենք պէտք է Հայաստանին նայենք մեր քաղա-քացիների շահերի պրիզմայով»:*

# ՔՈՒԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ

*Շարունակուած էջ 1-էն*

*մարզերը, Իջեւան եւ Էջմիածնում, Հայաստանի հնչակեանները իրենց իրաւունք կը վերապահեն յայտարարել, որ կուսակցութիւնը բաւականին կշիռ ունի այն մարդկանց մօտ, որոնք լաւատեղեակ են կուսակցութեան գաղափարներուն ու անցած ճանապարհին, յատկապէս վերջին 3-4 տարիներուն: «Մեզ ճանաչում են որպէս ազնիւ, սկզբունքային կուսակցութեան, որն իրեն երբեք չի կեղտոտել «անհասկանալի» պայմանաւորուածութիւնները կամ դիրքորոշումները փոխելով»:*

*Լուսմիլա Սարգսեանին ու իր կուսակիցներին այսօր աւելի կը մտահոգէ ոչ թէ այն, որ ՍԴՀԿ-ն անպայման ներկայացուած ըլլայ Խորհրդարանէն ներս, այլ այն, թէ որոնք են ընդհանրապէս յայտնուելու երկրի օրէնսդիր մարմինին մէջ:*

**ՔԱՂԱՔԱԿԱՆ**

# ԵԼՑԻՆԻ ԺԱՌԱՆԳԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*

*Անցեալ Շաբաթ, 70 տարի գոյատեւելէ ետք իբրեւ Խ. Միութիւն, Ռուսաստանի յետ-Կորպաչեւեան շրջանի առաջին Նախագահ Պորիս Ելցին իր մահկանացուն կը կնքէր 76 տարեկան հասակին փութինեան իշխանութիւնը պատշաճ կերպով կազմակերպեց Ելցինի թաղման արարողութիւնները որոնց, այլոց կարգին, ներկայ եղան Ամերիկայի երկու նախկին Նախագահներ, Հայր Պուշ եւ Քլինթըն: Ելցին արժանացաւ նաեւ ժողովրդային յարգանքի հազարաւոր ռուսեր իրենց յարգանքը մատուցին տողանցելով իր դագաղին առջեւէն:*

*Իր մահուան առիթով, տրուած ըլլալով իր համայնավար կարգերու յաջորդող՝ Նոր Ռուսաստանի նախագահի հանգամանքը, կ'ենթադրեմ որ արդար է, թէկուզ արագ, արժեւորման արժանացնել իր շրջանը, պատմութեան ձգելով իր վերջնական ժառանգի տարողութիւնն ու կարեւորութիւնը:*

***

*Հետեւեալ նկատումները կարելի է արձանագրել.*

*1. Նկատի առնելով իշխանութեան հասնելու իր արտասովոր պայմանները, Ելցին պիտի ստանար սովորական քաղաքագէտէ մը աւելի մեծ դէմքի մը կերպարը: Այս պատճառաւ ալ, իր ժառանգութեան ներկայիս կը տրուի խառն, գիրար հակադրող արժանիքներ, քանի որ ոչ ոք կարող էր հակակշռել այն ուժերը որոնք երեւան եկան Խ. Միութեան փլուզումով: Միեւնոյն ատեն, ոչ ոք, ոչ մէկ ղեկավար կրնար յաջողիլ գոհացում տալու խորհրդային կարգերէն ձերբազատուող, միլիոնաւոր քաղաքացիներու դրական եւ անմիջական ակնկալութեանց: Ճիշդ այս պատճառաւ ալ, նոյնիսկ այս օրերուն, քաղաքական իրագեկ մտածողներ, իր վաստակը քննած ատեն, կը դժուարանան ճշդել թէ ի՞նչ կրնար ըլլալ Ելցին եւ չըրաւ: Խ. Միութեան փլուզման յաջորդող այդ կարճ շրջանին, 1991-1993, երբ արիւնոտ օրեր տեղի կ'ունենային երկրին մէջ, Ելցին ըրաւ բան մը որ արտասովոր երեւոյթ կը հանդիսանայ պատմութեան մէջ: Այսինքն Ելցին խնայեց իր հակառակորդներուն, եւ նոր ղեկավարի իր հանգամանքը չօգտագործեց այս վերջինները հրապարակէն քշելու: Ընդհակառակը, Ելցին զանոնք մտցուց իր ստեղծած քաղաքական գործընթացին մէջ եւ կայացնելով անմիջական ընտրութիւններ երկրէն ներս, ընդունեց անկախ խորհրդարան մը, որ բազմաթիւ գոյ դռներ բացաւ, շատեր իրեն հակադրուող: Եթէ այս երեւոյթը կարելի ըլլայ դրական նկատել, անդին Ելցին առաւ այնպիսի քայլեր որոնք իր իշխանութեան փոփոխական, անկայուն դիմագիծ մը տուին: Այս քայլերէն մէկն էր, օրինակի համար, շրջանային փոքր ղեկավարներու տրուած յաւելեալ իշխանութիւնը, Զէչէնիոյ մէջ սկսուած ողբերգական պատերազմը, որ մինչեւ այսօր տակաւին կ'ունենայ պարբերական զարթումներ, բայց մանաւանդ իր ստեղծած առիթը, որպէսզի երկրին «օլիկարխ» դուռը, կարենայ թալանել երկիրը: Իր այսպէս ասած «ազատ» եւ «արդար» ընտրութեանց իբրեւ արդիւնք, Ելցին անկարող եղաւ ժողովրդային կամքը փոխադրել գերագոյն իշխանութեան:*

*2. Ելցինի նախագահութիւնը եղաւ մնայուն պայքար մը իր ժողովրդավարական բնազդներուն եւ այն երկար կեանքին միջեւ, որ խորհրդային վերին կարգերուն, «նոմանքլաթուրային» իր պատկանելիութեան արդիւնքն էր: Ինքը իր ույժը կը պարտէր փողոցին, սակայն խորքին մէջ ինք բռնատէր մըն էր: Այս պատճառաւ ալ, ինք միշտ ենթակայ մնաց երկուութեան մը, թափանցիկութիւն գաղտնապահութեան դիմաց, ազատութիւն «քոնթրոլ»ի դիմաց, ի վերջոյ «քոնթրոլ»ի յաղթանակին յանգելով, որ պիտի նշանակէր իշխանութիւնը Վլատիմիր Փութինին յանձնելը: Այս վերջինը, ինչպէս գիտենք, «KGB»ի ղեկավարներէն մէկն էր:*

*1996 Ելցինեան 2րդ շրջանը արդէն իր անկումին սկզբնաւորութիւնն էր: Այդ վայրկեանէն սկսեալ, Փութինի ոստիկանական պետութիւնը ինքզինք պիտի հեշտութեամբ հաստատէր: Իր սկսած ժողովրդավարական շարժումը չկրցաւ մնայուն հաստատութիւններ ստեղծել: Աւելի վատ իր անկումը թունաւորեց ռուս ժողովուրդի միտքը քափիթալիզմի եւ ժողովրդավարութեան նկատմամբ: «Օլիկարխ»ներու իշխանութիւնը յաղթեց ժողովուրդի տրամադրութեան վրայ, այնքան մը որ դժուար եղաւ զանազանել մէկ կողմէ ազատ ընտրութեանց «բարիք»ներն եւ միւս կողմէ ազատ շուկայական դրութեան միջեւ: Նոր իշխող «ընտրանի» դասը կազմուած էր հին «պիւրոքրաթ»ներէ, եւ նոր «թեքնոքրաթ»ներէ, որոնք լման անտարբեր էին ազատական ժողովրդավարական արժէքներուն նկատմամբ: 1990ական թուականներու վերջաւորութեան, երկրին նոր «տէրերը» անմիջապէս պիտի անդրադառնային որ ազատ ընտրութիւններն ու ազատ մամուլը անպայմանօրէն պիտի սպառնար իրենց իշխանութեան:*



*Պորիս Ելցին եւ Վլատիմիր Փութին*

## ՓՈՒԹԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿ ԳԱԼԸ

*«Կորսուած» առիթները, Ելցինի կողմէ, անխուսափելի պիտի թուին իր դիմագրաւած դժուարութեանց առջեւ: Արդեօ՞ք Ելցին կրնար աւելի լաւ ընտրութիւններ կատարել, սակայն երբ Փութին իշխանութեան անցաւ 2000 թուականին, գրեթէ քաոսային վիճակ մը արդէն կը տիրէր: Ինք Ելցին երբեք չուզեց անհատական ազատութիւնները կաշկանդել, բայց իր յաջորդը, Փութին, իր ամբողջ իշխանութիւնը հիմնեց, եւ յաջողեցաւ, եւ ուղղակի Ելցինի հակառակ ուղղութեամբ: Ամբողջ կառավարութիւնը դրուեցաւ ուղղակի Նախագահի իշխանութեան տակ: Ելցինի Խորհրդարանը, որ նոյնիսկ պիտի փորձէր զինք պաշտօնազուրկ ընել (իմփիչ), ամբողջովին կամակատար մարմնի մը վերածուեցաւ (puppet): Օլիկարխներու փտախտը «կոռուպցիան» արդէն լման թափանցած է Քրեմլինէն ներս, եւ տարածուած բոլոր աստիճաններու վրայ: Մամուլը, որ ազատ էր Ելցինը ուզածին պէս քննադատելու, ամբողջովին կը գտնուի Փութինի իշխանութեան ծառայութեան մէջ: Միակ տարբերութիւնը նշմարելի է երկրի տնտեսութեան մէջ, թէեւ ասոր գլխաւոր պատճառը կը հանդիսանայ, Փութինի շրջանին, քարիւղի գինին բարձրացումը, տակառը 10 տոլարէն մինչեւ 80 տոլարի: Հակառակ այս ահաւոր հարստութեան ռուս միջին դասակարգի կենսամակարդակը շատ քիչ փոփոխութիւն կը տիրէ ներկայիս:*

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

*Հակառակ իր բազմաթիւ յանցանքներուն, Ելցին իսկական մարդու տիպար մըն էր, իր առաւելութիւններով եւ տկարութիւններով: Այն հազարաւոր ռուսերը որ իր դագաղին առջեւէն տողանցեցին, Մոսկուայի մէջ, ուզեցին ցոյց տալ թէ, հակառակ իր բազմաթիւ ձախողութեանց, ան կը ներկայացնէր բարիքի մը կարելիութիւնը իր բոլոր նախաձեռնութեանց ընթացքին:*

*Պորիս Ելցին անցաւ պատմութեան: Շատ քիչ մնացած է իր հաստատած ազատութիւններէն: Սակայն իր հոգին կը մնայ կանգուն: Զինք փոխարինող անձը, Վլատիմիր Փութին, ըսուեցաւ արդէն, յաջողեցաւ Ելցինի բոլոր դրական, ազատախոհական նախաձեռնութիւնները փոխարինել բռնատիրական, «KGB»ական գործելակերպով մը, ընթացք մը ուր արդէն սկսած է երեւան գալ որոշ ճեղքեր, երբ երկրէն ներս քիչ բան մնացած է կողոպտելու: Շատ հաւանօրէն, հեռու չէ այն պահը երբ պէտք պիտի ըլլայ վերականգնել եւ ժողովրդավարական կարգերու առաջնորդել ամբողջ Ռուսաստանը...*

**www.massisweekly.com**

A.B.A. INSURANCE SERVICES
Blue Shield of California Authorized Agent
1975-2005 30th ANNIVERSARY
E-mail: BMaronian@AOL.com

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ



818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՓՐՈՖ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈԲԵԱՆԻ «ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Փրոֆ. Դոկտ. Գէորգ Խրլոբեանի «Ցեղասպանագիտութիւն» գրքի շնորհանդէսը, որ տեղի ունեցաւ Ապրիլ 18ին, Հայց. Առաք. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի «Գալայճեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի, կազմակերպութեամբ Գալիֆորնիահայ Գրողների Միութեան եւ մասնակցութեամբ Լոս Անճելըսի Գալիֆոնրիայի Համալսարանի Արդի Պատմութեան Ամպիոնի ու Նորթրիճ Համալսարանի Հայագիտական Ծրագրի: Ձեռնարկը անցաւ բացառիկ յաջողութեամբ:




Հանդիսութեան ներկայ էին տարբեր խաւերէ աւելի քան 500 մշակութասէր հայորդիներ: Դոկտ. Աւետիս Փափազեանը որ մօտաւորապէս 40 տարի եւ աւելի ուսումնասիրած է Հայկական Ցեղասպանութեան կապուած Թրքական աղբիւրները, եղած է Ազգային Ակադեմիայի Գիտութեանց Արեւելագիտութեան բաժնի աւագ գիտաշխատող եւ Երեւանի Համալսարանի պրոֆեսոր, աշխատութիւնը գլուխ առ գլուխ գիտական վերլուծական ենթարկելէ ետք եզրակացուց. «Իրօք որ Փրոֆ. Գէորգ Խրլոպեանի այս մեծարժէք աշխատութիւնը ծանրակշիռ ներդրում է Հայոց Ցեղասպանութիւնը միջազգային չափացող կատարուած վկայութիւններէն, Թուարկումներէն, ողբէն եւ գեղագիտացման քիչ թէ շատ ձախող փորձերէն»:

Գալիֆորնիահայ Գրողների Միութեան նախագահ՝ Գրիշ Դաւթեան իր բացման խօսքով նշեց գրքի դերը հայ պահանջատիրութեան ասպարէզին մէջ: Ընթերցուեցաւ Երեւանի Ցեղասպանութեան Թանգարանի Տնօրէն Դոկտ. Հայկ Դեմոյեանի կարծիքը ուր նշուած էր որ տուեալ ուսումնասիրութիւնը



նիշով ճանաչելու եւ դատապարտելու խնդրում: Հեղինակը մանրամասն վերլուծելով Հայերի Ցեղասպանութեան դրդապատճառները տուել է նաեւ դրա իմաստաւորումը եւ պատժելիութեան հիմնաւորումը, միեւնոյն ժամանակ առաջ քաշելով հողային եւ նիւթական կորստի հատուցման խնդիրները»:

Իսկ Փրոֆ. Յակոբ Կիւլիւճեան որ եղած է Վենետիկի Մխիթարեան վարժարանի ուսանող, հայագիտութեան դասախօս Պուէնոս Այրէսի Էլ Սալվատոր Համալսարանի եւ այժմ դասախօս UCLA համալսարանի, հաստատեց որ «գրքի ետին հեղինակ մը կայ, որ ունի թէ ողջակիզուած ընտանիք, եւ թէ փաստերու հեղեղ, սակայն կրցած է հաւասարակշռութիւն պահել եւ քանի մը հարիւր էջերու վրայ դնել վերոյիշեալ երկու վտանգներէն (զգացմունքայնութիւն ու չոր փաստագրութիւն) ընդհանրապէս հեռու մնացող մտածումներ»: Միաժամանակ ան նշեց. «Համադրական օգտակար գործ մը, որ կը ծառայէ հարցի ընդհանուր պատկերը դիտելու, եւ որ անհրաժեշտ աշխատանք մըն է մտածելու, միտքը տարածելու համար ցեղասպանութեան վրայ՝ անդին նորութիւն է հայագիտական այդ ասպարէզին մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գնահատագրութեան մէջ ոչ միայն արժէքաւորուած էր Փրոֆ. Խրլոպեանի այս գիրքը, այլեւ բարձր էր գնահատուած անոր ներդրումը հայագիտութեան ու հայ հոգեւոր մշակոյթի ուսումնասիրութեան ասպարէզներու նմէջ: Դոկտ. Արշակ Մատոյեանի հանգամանալից գրախօսականէն մէջբերուեցաւ այն միտքը որ տուեալ մենագրութիւնն ունի հանրագիտական բնոյթ: Երգիչներ Ռիմա Կարապետեան, Յովիկ Գրիգորեան, Գագիկ Պատալեան, Դանիէլ Տէքըր, դաշնակահար Հմայեակ Յովհաննիսեան, Ջութակահարուհի Մարիամ Յովհաննիսեանը ինքնատիպ հմայք ու գեղարուեստական երեստուին երեկոյին:Առաջին անգամ ըլլալով հնչեցին Իդա-Անահիտ Սեդրակեանի ստեղծագործութիւնները:

Ա.Մ.Ն.ի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանը իր փակման խօսքին մէջ ընդգծեց այն կարեւոր դերակատարումը որ ունի Դոկտ. Խրլոպեանը ինչպէս հայագիտու-

Շար.ը էջ 19

# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍ՝ ԱՐՄԷՆ ԼԻՒԼՈՅԵԱՆԻ

Երկուշաբթի, Ապրիլ 30ին, երեկոյեան ժամը 7:30ին Առաջնորդարանի Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան Համալիրի Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճին մէջ մասնաւոր պատուի արժանացաւ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ Արմէն Լիւլոյեան:

Բացառիկ այս առիթով հրաւիրուած էին Առաջնորդանիստ Մայր Տաճարի Բարերարները, Աւագ Կնքահայրերը, Կնքահայրերը եւ մասնաւոր հիւրեր: Նախագահութեամբ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի եւ մասնակցութեամբ Գերշ. Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի, Լոս Անճելըսի շրջանի հոգեւորականներու, ինչպէս նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն հիւրաբար Թեմս այցելող Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ. Մայիլեանի եւ Արժ. Տ. Վահրամ Քհնյ. Մելիքեանի, կարճ աղօթքով մը կատարուեցաւ:

Յայտագրին բացումը կատարեց Առաջնորդարանի Վարիչ Տնօրէն՝ Տիար Ռաֆֆի Քենտիրճեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Այս գիշեր ուրախութեամբ հաւաքուած ենք Առաջնորդարանի համալիրէն ներս մասնաւոր պատուի արժանացնելու եւ պաշտօնապէս բարի գալուստ մաղթելու Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ մեծայարգ Տիար Արմէն Լիւլոյեանի: Մեզի համար մեծ հաճոյք է յայտարարել, թէ Պրն. Լիւլոյեան իր ներկայութեամբ եւ մասնակցութեամբ միշտ ալ ազնիւ վերաբերմունք եւ յարգանք ցուցաբերած է Առաջնորդարանի կողմէ կազմակերպուած բոլոր ձեռնարկներուն»: Պրն. Քենտիրճեան կարդաց Պրն. Լիւլոյեանի հակիրճ կենսագրականը եւ ապա իրեն յանձնեց Գալիֆորնիա Նահանգի Գոնկրեսմէն՝ Տիար Փոլ Գրիգորեանի կողմէ յատկապէս այս առիթով ղրկուած Գնահատագիրը:

Առաջնորդ Սրբազան Հայրը սրտագին բարի գալուստ մաղթեց Մեծայարգ Գլխաւոր Հիւպատոսին՝ յայտնելով, թէ հպարտ կը զգանք, որ երիտասարդ եւ ազգանուէր դիւանագէտը չափազանց օգտակար հանդիսացած է Հայաստանի եւ այժմ իր հարուստ փորձառութեամբ եւ հայրենասիրութեամբ, հայահոծ Մեծագոյն Լոս Անճելըսի մէջ եւ յատկապէս պետական եւ դիւանագիտական շրջաններէն ներս պատիւ եւ յարգանք կը բերէ Հայրենիքին եւ Հայ ժողովուրդին: Սրբազան Հայրը շեշտեց Գլխաւոր Հիւպատոսութեան հետ համագործակցութիւնը, որ պիտի շարունակուի եւ աւելի զարգանայ՝ առաւելագոյն չափով օգտակար հանդիսանալու համար Մայր Հայրենիքին: Սրբազան Հայրը իր յատուկ գնահատութիւնը յայտնեց Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբի Ատենապետ՝ Տիար Արմէն Համբարի եւ Հանգանակիչ Յանձնախումբի Ատենապետ՝ Տիար Անդրանիկ Ջորայեանի եւ յայտարարեց, թէ մօտ ապագային Պըրպէնքի Քաղաքապետարանին կողմէ շինութեան վաւերացումը ապահովելէ ետք, մի քանի ամիս յետոյ Աստուծոյ օգնութեամբ պիտի սկսին Մայր Տաճարի կառուցման աշխատանքները:

Հանգանակիչ Յանձնախումբի Ատենապետ՝ Տիար Անդրանիկ Ջորայեան իր գոհունակութիւնը յայտնեց, որ հաւաքական ջանքերով եւ ժողովուրդի մասնակցութեամբ աշխատանքը պիտի շարունակուի: Իր շնորհակալկութիւնը յայտնեց բոլոր նուիրատուներուն:

Սրբազան Հայրն ու Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Արմէն Լիւլոյեան պաշտօնապէս բացումը կատարեցին Մայր Տաճարի Բարերարներու, Աւագ Կնքահայրերու եւ Կնքահայրերու Յուցատախտակի (plaque):

Պրն. Լիւլոյեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ զինք այս պատուին կ'արժանացնէր: Խօսեցաւ Հայաստանի անկախացումէն ետք երկիրը դիմագրաւող դժուարութիւններու եւ արձանագրուած բազմաթիւ յաջողութիւններու եւ առաւել բարգաւաճման մասին: Շեշտեց, որ արտասահմանի հայութիւնը եւ յատկապէս Միացեալ Նահանգներու հայութիւնը, որոնց մէջ մասնաւոր տեղ կը գրաւէր Արեւմտեան Թեմը, զանազան միջոցներով եւ նիւթապէս օգտակար կը հանդիսանան Հայրենիքին, նոր ծրագիրներուն եւ մեր հայրենակիցներուն: Յիշեց, թէ անցնող տարիներու ընթացքին նոր շինարարութիւններ եւ վերանորոգութիւններ կը կատարուին Հայաստանի մէջ, ինչպէս դպրոցներ, հիւանդանոցներ, բնակութեան շէնքեր եւ երկրին տնտեսութիւնը կը զարգանայ եւ տարածաշրջանին մէջ Հայաստան իր իւրայատուկ տեղը կը գրաւէ: Հայոց Ցեղասպանութեան մասին Հայաստանի տարած աշխատանքին կարեւորութիւնը շեշտեց

Շար.ը էջ 19



## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# «ՀԱՅՐԵՆԱՇՈՒՆՉ»



**ԱԼԻԿ ԱՍԱՏՐԵԱՆ**

«Քարաւանի» քայլարշաւին այս ափերուն,
Ճամբաներուն, փողոցներուն մէջ տարանան,
Սկսեր ենք օրօրոցէն մեր սփիւռքեան,
Ու կը քայլենք տասը տարի, նոյնիսկ մինչեւ
քսան, յիսուն, բայց չենք յոգնի,
յոգնելն ի՞նչ է,
Երբ մեր հետն են անբաժան յոյս ու հաւատք,
Իբրեւ ընկեր եւ բարեկամ,
Պիտի քայլենք մենք վճռակամ,
Քայլարշաւն այս մեր պատմութեան
Ինչ փոյթ քանի քանի տարի
Մինչեւ փոխուի յաղթարշաւի,
Դէպի գահոյքն Հայաստանի՝ Արարատին...

*Տաս տարուայ մանուկ է «Քարաւան» պարախումբը ժամանակ հասկացողութեան մէջ, բայց արի ու տես, Նոյեմբերի 12ին 2006 թուի Կլէնտէյլ Հայ Դպրոցում տեղի ունեցած տասնամեայ համերգ տօնահանդէսը լիիրաւ եկաւ հաստատելու իր ուրոյն տեղը Լոս Անճելոսեան համայնքի արուեստասէրների կեանքում, իր բարձր որակով, կատարողական մեծ վարպետութեամբ, գեղարուեստական բարձր ճաշակով, երաժշտական համարների բծախնդիր ընտրութեամբ, բեմական կարգապահութեամբ, համեմուած զգեստների ճաշակով եւ բեմական, լուսային գործօններով,*

*Այս բոլոր պատասխանատուութեան կրողները, առաջին հերթին «Քարաւան» պարախմբի բոլոր սաներ են անխտիր, փոքր, 3 տարեկան հասակից մինչեւ 20-25 տարեկանը, նրանց անխոնջ-անմնացորդ նուիրուած ղեկավարով՝ պարուսոյց յարգարժան Ռուբէն Նիկոլեանով եւ պարուսոյց Կարինէ Գալուստեանով, անսակարկ նուիրուած ծնողաժանդակ մարմնով, եւ ոչ պակաս, դրուատանքի արժանի բոլոր սաների ծնողներով, որոնք հաւատում են արուեստի ուժի գործօնը, այդ դէպքում պարարուեստի՝ իրենց զաւակներին հայեցի մարդ դաստիարակելու ճանապարհին:*

*Անկեղծ լինելու համար, բառերը քիչ են արտայայտելու յուզական, հպարտութեան արցունքով լեցուն այն հմայքը, որ ըմբոշխնեցին դահլիճում նստածները, ի տես՝ խնամքով ընտրուած, իրար ետեւից յաջորդող տարբեր երկրներին բնորոշ պարեղանակով, շրջագայութեանը սկսելով «Հայաստանից» եւ վերադառնալով «Հայաստան» աւելի ճիշտ սկսելով «Քարաւան» պարով եզրափակելով «Արցախ» պարով, ինչով որ տարբերւում է Քարաւան պարախմբի ծրագիրը ուրիշ պարախմբերի ծրագրից: Սա ընդունուած կարգախօս է պարային այս գեղեցիկ ընտանիքի համար, արուեստի հմայիչ ուժով զօրակցութիւն յայտնելու արցախեան ազատագրման, Արցախի քաջարի ժողովրդի ազատատենչ պայքարին, ի լուր աշխարհին, ինչպէս որ 2005 թուի աշխարհի արուեստի մրցոյթին «Քարաւան»ի երկու սաները՝ Ռիթա Ալաջաջեանը եւ Վազրիկ Արութիւնեանը Արցախ երկրի դրօշի տակ շահեցին ոսկէ մեդալներ, դրանով իրենց փոքր բաժինը բերելով Արցախի Անկախութեան ճանաչման գործում:*

«Թէեւ մենք հոս, թէեւ դուք հոն,
Որչափ հեռու, նոյնչափ ենք մօտ
Մենք իրարու
Դուք՝ Հայրենիք մասիսաշուք,
Իսկ մենք՝ Սփիւռք,
Բայց միշտ մէկ ենք
Զոյգ գագաթին պէս մասիսեան
Եւ կը մնանք, մէկ,
Մէկ եռագոյն երկնքի տակ:


Merrill Lynch
INVESTMENT BANKING
JACK KALANJIAN
Professional Financial Advisor
Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com
"Helping the Armenian Community Build Wealth"


# ԶԳՈՒՇԱՑԷ՛Ք ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՎՆԱՍԱԿԱՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՉԱՐ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐԻՑ

**ՆԱԶԻԿ ՂԱԶԱՐԵԱՆ**
*(Վկայուած Կլինիկական Հիպնաթերապիստ)*

Երգը զէնքի պէս զգո՜յշ գործածիր,
Երբ խառն է դարը.
Նոյն արճիճից են ձուլում, իմացի՛ր
Գնդակն ու տառը:

Գէորգ Էմին

*- Ոչ մի բան այնքան խիզախութիւն չի ներշնչում, որքան տեղին ասուած խօսքը, - ֆրանսիացի դասական Ալեքսանդր Դիւմայի կողմից, իր հերոսներից մէկի բերանով ասուած այս արտայայտութիւնը լիովին կարելի է վերագրել ճարտարապետ Վարուժան Ազնեհիրեանի ս/թ Մարտի 31-ին «Նոր Հայաստան» օրաթերթում եւ «Նոր Օր» շաբաթաթերթում հրապարակուած «Սեւ կատուին մութ սենեակն էլ չի օգնի մուկ բռնելու համար» յօդուածին:*

*Ամէնից առաջ իմ խորին շնորհակալութիւններս եմ յայտնում նրան, անիրաւութեան ու բացայայտ թշնամական արարքի դէմ ճիշտ ժամանակին ձայն բարձրացնելու համար: Ասում եմ թշնամական արարք, որովհետեւ պարոն Ազնեհիրեանի զայրոյթը ուղղուած է նրանց դէմ, ովքեր Հայաստանի ու հայ ժողովրդի պարծանքը հանդիսացող, Հայաստանը աշխարհին ներկայացնող շողշողուն ադամանդներից մէկի փայլը խամրեցնելու նպատակով, օգտագործում են աշխարհի ստեղծումից ի վեր գոյութիւն ունեցող հզօրագոյն զէնքերից մէկը, խօսքի ուժը:*

*Համաձայն ժողովրդական իմաստութեան՝ լեզուի (խօսքը արտայայտելու գործիք) հասցրած վէրքը ամենաուշն է ապաքինւում:*

*Խօսքը այն հզօր զէնքն է, որով կարելի է սպաննել եւ նոյնիսկ ինքնասպան լինել, ներշնչման (ինքնաներշնչման) միջոցով այն հասցնելով ենթագիտակցութեանը:*

*Շատերս ենք ականատես եղել կամ պատմութիւն լսել այս կամ այն երիտասարդի զինուորական ծառայութիւնից վերադառնալու կամ երիտասարդ զոյգերի ամուսնական հանդէսի ուրախութեան արարողութեանը հետեւող աւագ սերնդի՝ տատիկի կամ պապիկի անակնկալ մահուանը: Սակայն դժուար թէ որեւէ մէկի մտքով անցած լինի, որ դա նախօրօք ծրագրուած (ներշնչուած) է եղել այդ մահացողի ամիսներ կամ տարիներ առաջ արտայայտած մէն մի ինքնաներշնչման արտայայտութեամբ («Թոռանս հարսանիքը տեսնեմ՝ յետոյ մեռնեմ» կամ «Թոռանս զինուորութիւնից վերադառնալը տեսնեմ, յետոյ մեռնեմ»): Եւ ահա ցանկութեան իրականացումից յետոյ իրականանում է նաեւ հետեւեալ ցանկութիւնը՝ մահը:*

*Կամ մէկ այլ օրինակ. հայ ականաւոր երգահաններից մէկի շրջապատի մտերիմները կարող են վկայել, որ նա միշտ ասում էր, թէ ինքը քաղցկեղով պիտի մահանայ: Նորից իր արտայայտութեան (ներշնչման) հետեւանքը չուշացաւ: Նա մահացաւ դեռեւս ուժերի ծաղկման շրջանում՝ յիսուներեք տարեկան հասակում քաղցկեղից:*

*Պատմութեանը յայտնի է, որ ֆրանսիացի ականաւոր գրող Ալեքսանդր Դիւմա - Որդին՝ իր «Կամելիազարդ տիկինը» վէպը գրելու ժամանակ, հերոսի թունաւորման տեսարանը նկարագրելիս, այնպէս է ինքնաներշնչուել, որ իրականից թունաւորուել է առանց որեւէ թունաւոր նիւթ ընդունելու:*

*Նոյն իրավիճակն է տիրում բժիշկների կողմից այսպէս ասած «ժառանգական» համարուող շատ հիւանդութիւնների դէպքերում: Եթէ ընտանիքում աւագ սերնդի ներկայացուցիչը ունի «ժառանգական» մի որեւէ հիւանդութիւն, ապա ընտանիքում անընդհատ այդ հիւանդութեան մասին խօսելը բաւական է զաւակներին ներշնչելու, որպէսզի նրանք նոյնպէս յետագայում հիւանդանան այդ հիւանդութեամբ: Դրան հակառակ, երբ զաւակները անտեղեակ են լինում իրենց ծնողների հիւանդութեանը, ճակատագրի բերումով փոքր հասակից բաժանուած լինելով նրանցից, շատ դէպքերում, յետագայում նրանք զերծ են մնում այդ հիւանդութիւններից:*

*Ինչու՞ եմ այսքան օրինակներ մատնանշում: Որովհետեւ «Ջերմուկ»-ի վտանգաւորութեան մասին հաղորդագրութիւնը իր մէջ պարունակում է նաեւ մասսայական բացասական չար ներշնչում՝ ուղղուած նախկինում «Ջերմուկ» օգտագործած իւրաքանչիւր անհատի: Ամէն ոք, ով խմել է այդ ջրից, կարող է մտածել (ներշնչուել) եւ բացառուած չէ, որ շուտով իր մօտ յայտնաբերուի այդ մահացու հիւանդութիւնը: Սակայն հիւանդութեան պատճառը ամենայն հաւանականութեամբ կը լինի ոչ թէ այդ անմեղ, բուժիչ, կազդուրող հանքային ջուրը, այլ այդ չարաբաստիկ հաղորդագրութիւնը: Հաղորդագրութիւն՝ որի հեղինակները, ամենեւին էլ բացառուած չէ, որ իրենց յետին ծրագրերում ունենան այս բացասական ներշնչման նպատակը:*

*Որպէս մասնագէտ ասեմ, որ այդպիսի բացասական ներշնչումներից, ի յարկ է մասնագէտի ուղեկցութեամբ, կարելի է ազատուել կարճատեւ մի վարժութեան միջոցով:*

*Հաղորդագրութեան հեղինակները հմուտ հրաձիգի նման մէկ փամփուշտով մի քանի նպատակ են ցանկացել խփել: Նրանց գերագոյն նպատակներից մէկը, ինչպես դիպուկ նշել է տնտեսագէտ Ի. Աղաջանովը մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, «Ջերմուկ»-ի նկատմամբ տնտեսական պայքարն է միջազգային շուկայում:*

*Իսկ իմ կարծիքով, «Ջերմուկ»-ի վերաբերեալ հաղորդագրութիւնը, հետապնդում է նաեւ տասնհինգամեայ անկախ Հայաստանի Հանրապետութեան արտահանած ապրանքների արատաւորումը սպառողների մօտ, ինչպէս նաեւ աշխարհասփիւռ հայութեան անուանարկումը օտարների աչքին:*

*Դեռ մանուկ հասակից իմ հիշողութեան շտեմարանում իր ուրոյն տեղն ունի ''Ջերմուկ''-ի դրական նկարագիրը: Իմ այն համոզմունքը, որ «Ջերմուկ»-ը առողջարար է, որեւէ մէկը չի կարող խաթարել, քանի որ մայրս բուժուել է Ջերմուկում, «Ջերմուկ»-ի օգնութեամբ: Հայրս՝ որը հիմա*

Շար.ը էջ 17

# Massis Weekly

Volume 27, No. 15 Saturday, MAY 5, 2007


## Kocharian Exposes Hid Regimes Discontent With The OSCE Election Mission

Robert Kocharian has exposed his regime's discontent with the activity of the OSCE mission deployed for the May 12 parliamentary elections fearing that it will be a "tool" in the hands of unspecified external powers and oppostion forces.

Kocharian had taken issue with the OSCE's highly critical assessment of its handling of the last presidential and parliamentary elections held in 2003. The findings of the mainly Western observers acting under the OSCE aegis gave weight to opposition allegations of massive vote rigging.

"We always intended to invite observers," he said. "We just wanted to negotiate and make sure the observer mission is free of various political pressures and does not cater for various political interests."

Reports in the Armenian press late last year said official Yerevan is trying to make sure that the OSCE mission is not headed by U.S. or British officials and includes more representatives of France and Russia, countries that have been less critical of the Kocharian administration's democracy record. The head of the mission, Boris Frlec, comes from the former Yugoslav republic of Slovenia.

Frlec told RFE/RL that he has discussed Yerevan's concerns with Foreign Minister Vartan Oskanian. "Mr. Oskanian expressed the wish of the Armenian side that the election observation mission should be, as far the national composition is concerned, as broad as possible," he said.

"In the [mission's] core team, including long-term observers, 24 different nations are represented among 40 people," argued Frlec. "In addition to that, countries of the OSCE responded to the call of the [OSCE's] Office of Democratic Institutions and Human Rights and sent 300 short-term observers that cover an extremely wide spectrum of different nationalities."

## Ruling Republicans And Dashnaks Accuse Each Other For Populism And Fraud

A senior government official affiliated with the ruling Republican Party of Armenia (HHK) dismissed as "populist" its junior coalition partner's pre-election pledge to sharply raise the country's modest pensions and salaries.

The Armenian Revolutionary Federation (Dashnaktsutyun), which holds four ministerial posts in Prime Minister Serzh Sarkisian's cabinet, has committed itself to more than doubling the minimum monthly wage to 50,000 drams ($140) as early as next year. Its campaign manifesto also says the average pension will be raised from the current 13,400 drams ($38) to 50,000 in 2008 if the center-left nationalist party does well in next week's parliamentary elections.

Vazgen Khachikian, the Republican head of the state pension, criticized the campaign pledges in a public debate with Deputy Social Security Minister Artsvi Minasian, a member of Dashnaktsutyun. "We take into account Armenia's real potential for development, while the Armenian Revolutionary Federation is setting objectives which I believe can not be achieved in the foreseeable future," said Khachikian.

The HHK program says that the average monthly amount of retirement benefits paid to more than 500,000 Armenians will reach 33,500 drams only in 2012. Dashnaktsutyun leaders, including Social Security Minister Aghvan Vartanian, insist, however, that pensions and broader public spending will grow much faster if the government combats widespread corruption and tax evasion in earnest.

Khachikian claimed that Dashnaktsutyun has set far more ambitious targets simply because it feels safe in the knowledge that it will not be running the government as a result of the May 12 elections. "An election campaign is not the best time to give lavish promises, while realizing that you are not

Continued on page 3

## Investigation Of Hrant Dink's Murder Concluded

The General Prosecutor's Office of Turkey marked as terrorism the actions of 18 citizens of Turkey, detained during the investigation of the murder of Hrant Dink.

According to "Zaman", the 73 page long Act of persecution, in which ended up the investigation, states that Erhan Tuncel and Yasin Hayal created a terrorist group in Trabzon and that the group is responsible not only for the murder of Hrant Dink but also the explosions at the "McDonald's" in Trabzon and the murder of catholic priest Santoro. The Prosecutor's Office demands criminal cases be started against all the 18 detained.

The Act prosecution requires lifetime imprisonment for Hayal and Tuncel, and detainment of only 14-20 years for murderer Ogun Samast, because of his immatureness upon the moment of committing the murder.

Various measures of punishment are required for "Great Unity" party members Yasar Cihan and Halis Egmen as well as their 15 assistants.

"Zaman" also reports that the 14th Court of Istanbul refused to receive the Act because of certain mistakes in it. The Court stated it will undertake teh case after the mistakes are corrected.

## Freedom House Annual Report: Press Is Not Free In Armenia

Freedom House has released the findings from its 2007 edition of Freedom of the Press, an annual survey tracking trends in global media freedom.

The Armenian constitution guarantees freedom of the press, although the government and those closely connected to the ruling party frequently fail to respect press freedom in practice. Libel remains a criminal offense. A coalition of nongovernmental organizations (NGOs)—including the Yerevan Press Club, the Journalists' Union of Armenia, Internews Armenia, the Committee to Protect Freedom of Expression, and the Investigative Journalists' Association—drafted a proposal to abolish Article 318 of the Armenian Criminal Code, which establishes criminal liability for insulting a public official. Armenia adopted freedom of information legislation in 2003, but the law has been poorly implemented.

In September 2006, Arman Babajanian, editor of the opposition daily Zhamanak Yerevan, was sentenced to four years in prison for falsifying documents to avoid military service. Although he pleaded guilty, media organizations expressed concern that the trial was politically influenced, since the sentence was unusually harsh for such an offense. The president appoints all the members of the National Commission for Television and Radio (NCTVR), the body that oversees the broadcast media. The commission's actions are government controlled and not transparent. During the year, A1+, once a vocal and politically independent television station, continued efforts to obtain a frequency license, but all 12 of its applications over the past four years have been denied by the NCTVR. In 2002, the NCTVR had revoked A1+'s license and subsequently gave it to a progovernment national television station. Since then, the station has remained vocal by producing television programs and internet publications. Each year, Armenian journalists organize protests on the anniversary of the station's license revocation. The Armenian National Academy of Sciences filed a lawsuit in March 2006 demanding that A1+ vacate the building it had occupied for the past 15 years. The academy owned the building and won the lawsuit, and the journalists were given 24 hours to leave. Separately this year, the government proposed a draft law that would have changed the composition of the NCTVR, with half the members appointed by the parliament and the other half by the president. The legislation also sought to reduce television coverage of the parliament. However, lawmakers rejected the bill in September.

While the government does not exert direct control or censorship over the media, it maintains a firm grip, particularly over broadcast media, through informal pressure on outlet owners. Print publications are typically free to report diverse views, partly because their low circulation and lack of presence in rural areas make them a less likely target for government pressure. The highest-sell-

Continued on page 4

## Karabakh Army Chief Appointed New Head Of Staff Of Armenia's Military



Lieutenant-General Seyran Ohanian, commander of Nagorno-Karabakh's ethnic Armenian army, confirmed on Wednesday reports that he will be appointed as the new chief of staff of Armenia's Armed Forces.

"Yes, I have received an offer to be appointed as chief of the Armenian army's General Staff and have already accepted it," Ohanian was reported to have told a news conference in Stepanakert.

The top military position has been vacant since its previous longtime holder, Colonel-General Mikael Harutiunian, was named Armenia's defense minister.

Incidentally, Harutiunian visited Stepanakert late last week to meet with Karabakh President Arkady Ghukasian, Ohanian and other local officials.

Ohanian would not specify when he will move to Yerevan. Reports in the Armenian press have said the appointment will be formalized immediately after the elections.

Ohanian, 44, is a career army officer who served in the Soviet military before joining Karabakh's newly formed army and playing a major role in its successful 1991-1994 war with Azerbaijan. He became the army's chief of staff in February 1993, five months after being seriously wounded in action and having one of his legs amputated as a result.

## Tapes and Tricks: Opposition Parties Encounter Unwelcome Attention On The Campaign Trail

**By Gayane Abrahamyan**
**ArmeniaNow reporter**

The third week of the parliamentary election campaign in Armenia was marked by allegations of dirty tricks after it emerged that the National Security Service apparently taps the conversations of politicians and diplomats.

The pro-government newspaper Golos Armenii published an article titled "By the Table at Marco Polo: At What Price Does Artur Baghdasaryan Sell the Fatherland?"

It purported to contain a transcript of a conversation about the election campaign at Marco Polo restaurant, presumably in February; between the leader of Orinats Yerkir Artur Baghdasaryan and a highly ranked official from British Embassy (the newspaper does not name the diplomat).

According to the newspaper's editors, a CD with the recording on it was passed to them by unknown persons; they say they have no reason to doubt that the voice belongs to Baghdasaryan, a former Speaker of the National Assembly.



**Orinats Yergir leader Artur Baghdasaryan**

In the recording, Baghdasaryan tries to convince his British interlocutor that international organizations should give strongly negative evaluations of election procedures.

However, the Briton replies: "These authorities have calculated well, they know how far they can go and stop, where … before we can take any measure, they must exceed the bounds. But they don't overstep the limits. I think they are smarter than us. And many Europeans realize this as well. We need a definite case of violation before the European Union appears with such a statement."

Baghdasaryan counters by saying that the election will be accompanied by violations and he forecasts people that will go out into the streets. He predicts 100-200 arrests and beatings after the election results, and insists that the international community will be then unable to say that everything went well.

According to the newspaper the British diplomat also complains that President Robert Kocharyan dislikes the British and Americans. It quotes him as saying: "He (the President) made it quite clear that he does not want to deal with British and Americans. It's because things could not be set going without their involvement in Ukraine, Georgia…He accepts only the French and Russians."

Orinats Yerkir responded to the story with a statement complaining about the "dissemination of false information through the press on the eve of the election".

The British Embassy also issued a statement saying it was "concerned and disappointed" about the tapping of a conversation between an embassy official and an opposition party leader. It noted that the embassy, along with the OSCE, the European Union, Council of Europe, and the rest of the diplomatic community was keen to see fair elections in Armenia on May 12.

"In this context the Embassy maintains a wide range of contacts and dialogues with institutions and individuals across the political spectrum in Armenia, in order to be informed of all shades of political opinion. This enables us to form as complete and objective a view as possible of the political process, and is in line with the normal and accepted practice of any embassy anywhere in the world".

At a meeting with students of Yerevan State University Robert Kocharyan reflected on the tapped conversation between Baghdasaryan and the diplomat.

"This is a true manifestation of treason to me. It is especially ugly because it was done upon one's [Baghdasaryan's] own initiative. No one has forced [him to do that], no one has tortured [him]. A person able to betray once, is able to do it the second, third and fourth time."

On Sunday, the next day after this statement Baghdasaryan responded to the President of the country on free air provided for political advertisement on the Public TV.

"Mr. Kocharyan, those who falsify elections, violate human rights, create and propagate an atmosphere of fear, who rob and exploit the people and then lose (the money) in casinos abroad and care purely for doubling their millions, are those who are betraying the country and the people," Baghdasaryan stated.

Armenia's Constitution prohibits tapping of any person, including diplomats and politicians, except for some case envisaged by law, but Baghdasaryan has not lodged a complaint with the Prosecutor General's Office.

Baghdasaryan says he frequently meets diplomats of various countries to discuss the upcoming elections and the need for the international community to pay attention to procedures.

"Why publicize this record made in February in the hottest period of campaign? The reason is some are concerned with the Orinats Yerkir Party's growing popularity. Why does Haylur [the news program on Public TV], which usually does not cover Orinats Yerkir, prepare a huge 10-minute report in its Sunday edition presenting Baghdasaryan as a high traitor? All this is a political order," Baghdasaryan told ArmeniaNow.

Other politicians hold a different opinion. Suren Surenyants, a member of the Republic Party's political council is amazed with both Baghdasaryan's and the authorities' response.

"If the tapping is true, why does Baghdasaryan not appeal to the Prosecutor's Office, and why do the authorities not send a note of discontent to the embassy? This is a dark story and it is unclear whether it is a black or some other kind of PR," says Surenyants.

The Heritage Party – a target of pressure since last year - also fell victim to unpleasant events in the campaign this week after sociologist Aharon Adibekyan stated that its popularity was growing and that people were excited by meetings with its leader Raffi K. Hovannisian.

On April 20 four unknown men got out of a BMW car and attacked one volunteer student Nune Ashughyan who was distributing Heritage campaign leaflets in the Avan district of Yerevan. They made off with 300 party leaflets after a brawl.

"I felt ashamed as a citizen once again when I heard the news. We have appealed to the police and will be demanding public apologies and compensation," Hovannisian says.

However, the information on the official site of the Police on Saturday said that Robert Petrosyan, one of the men [getting out of the BMW] explains he took the Heritage leaflets as he got anxious with seeing them been thrown on the ground inside the building entrance and the yard his mother cleans. The statement says Nune Ashughyan, the aggrieved party said Petrosyan did not threaten, terrorize or insulted her when taking the leaflet.

However, Ashughyan says the leaflets were snatched from her and she was threatened to not return.

Hovsep Khurshudyan, Hertiage spokesperson says the police tries to slur the case over by the statement.

"The girl is terrorized after the threats as she was told 'not to show up on their territory'… 'otherwise it will be very bad for you'. If four well-built men attacked the Police head Hayk Harutyunyan's daughter, would he treat the guilty the same way?"

Khurshudyan, says that Heritage is also the target of black PR.

"We have information that some people knock on the doors of houses in Avan and offer 5,000 drams in the name of the Heritage Party if people will vote for Hovannisian. They are smearing us – we do not distribute bribes to voters," Khurshudyan says.

Hovannisian says also the party faces obstacles in booking meeting halls and advertising boards.

"We had an arrangement with private companies months ago to provide us with 50 free boards; but they unanimously refused to post our advertisements at the last moment when they learned whose portrait was to be put there," says Hovannisian.

Hovannisian compared the situation in Armenia to the Middle Ages: "The feudal mayors and village heads consider the territories their princedoms, where no one is allowed to enter. But we will continue to fight to get rid of this feudalism of 21st Century."

## Revised Genocide Exhibit Opens Political Correctness Reigns At The United Nations

**By John F. McManus**
**John Birch Society**

Առաջին համաշխարհային պատերազմում լինելով Ռուսական կայսրութեան դաշնակիցը, Անգլիան անազնիւ խաղ էր խաղում Ռուսաստանի եւ Մերձաւոր Արեւելքի քրիստոնեաների հետ: Նոգալեսին, իբրեւ փորձուած զօրահրամանատարի, զարմացնում է այն, ինչ ինքը անուանում է իրաքեան ռազմաճակատում անգլիական զօրահրամանատարների «զպուածութիւն»: Անգլիացիները, թէեւ գերակշռում էին թւով ու ռազմական տեխնիկայով, գտնուելով յաղթանակին մերձ՝ երկու քայլի վրայ, անսպասելիօրէն նահանջում են եւ հնարաւորութիւն են տալիս թշնամուն իրենց ուժերը կարգի բերելու: Նոյն բանը տեղի ունեցաւ եւ Դարդանելի յայտնի ռազմական գործողութեան ընթացքում: Կարծես թէ Անգլիայի կառավարող շրջանները պահպանում էին երիտթուրքերի բանակը եսապաշտական նպատակների համար, առաւել կարեւոր, քան Անտանտայի երկրների ընդհանուր յաղթանակը: Հենց Դարդանելը պաշտպանող Թուրքական բանակում գնդապետ, դէոնմէ Մուստաֆա Քեմալը, որ «Վերածնուած Մակեդոնիա» մասոնական օթեակի անդամ էր եւ Թալաաթի, Էնվերի եւ Ջեմալի անկումից յետոյ շարունակեց հայերի ցեղասպանութիւնը, ստացաւ «անյաղթելի հերոս»-ի իր առաջին դափնիները:

Բրիտանական զինուած ուժերի հրամանատարութեան տակտիկան հանգեցրեց թէ՛ անգլիական բանակի, թէ՛ Մերձաւոր Արեւելքի քրիստոնեաների բազում զոհերի: Բրիտանական դեսանտը Հելլիպոլում, որի ափ իջնելը առաջարկել էր մասոն Ու. Չերչիլը, դատապարտուած էր ոչնչացման: Զոհուեցին տասնեակ հազար անգլիացիներ, աւստրալացիներ, նորզելանդացիներ: Դարդանելի գործողութեան ընթացքում անգլիացիների պարտութիւնը ազատ արձակեց երիտթուրքերի ձեռքերը եւ նրանց մղեց հայերի եւ Օսմանական կայսրութեան այլ քրիստոնեաների ոչնչացմանը:

Հայերի համար նոյնանման հետեւանքներ ունեցաւ 1920 թուականի Յունիսին ամերիկեան սենատում նախապէս ծրագրուած տապալումը ԱՄՆ-ի Հայաստանեան մանդատի, որի սահմանները արդէն որոշուած էին Սեւրի դաշնագրով: Ամերիկեան կառավարող շրջանները, որոնք վերահսկւում էին ետնաբեմից, հայկական հարցի շուրջ վարում էին մի քաղաքականութիւն, որ շատ ներդաշնակ էր Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականութեանը եւ արեցին ամէն ինչ, որպէսզի Հայաստանի մանդատը չհաստատուի:

Ե՛ւ Մեծ Բրիտանիայի, ե՛ւ ԱՄՆ-ի այս երկակի խաղը շատ բանով կանխորոշեց շրջաններն ու չափերը հայոց ցեղասպանութեան, ինչը սկսուեց այն պահից, երբ «Միութիւն եւ առաջընթաց» կոմիտէն ամրապնդեց իր իշխանութիւնը: 1909 թուականի Ապրիլին տեղի ունեցաւ հայերի ջարդը Ատանայում, նրանց ունեցուածքի զաւթումով: Բայց վրդովմունքը երկրում եւ երկրից դուրս այնքան մեծ եղաւ, որ երիտթուրքերի ղեկավարները ջանացին կատարուածի մեղքը բարդել նախկին վարչակարգի վրայ եւ զանգուածային սպանութիւնների զոհերի հատուցման դիմակահանդէս սարքեցին: Թալաաթը, Էնվերը եւ Ջեմալը ստիպուած եղան սպասելու Առաջին համաշխարհային պատերազմին, որպէսզի իրագործեն վաղուց

*Շար.ը էջ 18*

# ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ

*ԱԻԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ*

*Տողերիս գրողը ծնուել է Իրանի Արաք քաղաքի շրջանում գտնուող Քալաւա, երբեմնի հայաբնակ գիւղում 1920 թուականին: Յաճախել է գիւղի վեցամեայ դպրոցը: Այն օրերին մեր ուսուցիչներն էին Արեւմտեան Հայաստանից գաղթած նուիրեալներ, որոնցից յիշում եմ Ներսէս Ներսիսեանին, Մկրտիչ եւ Պապան Ֆախուրեաններին, Երուանդ Ֆրանգեանին եւ Խորէն Վարդապետի ձեռքի տակ դաստիարակուած ուրիշներին: Հայրս՝ Երեմ Նազարեանը 15 տարի մեր շրջանի գիւղապետն էր: Գիւղում ունէինք խանութ, որի հաշիւները իմ ձեռքում էին: Այն օրերին ես գիւղի գրաճանաչներից էի: Ով ցանկանում էր իր հարազատին նամակ գրել, դիմում էր ինձ: 18 տարեկան էի երբ ինձ ընտրեցին անդամ գիւղի հոգաբարձական կազմի: Տարիքով բոլոր անդամներից փոքր էի եւ սիրում էի ծառայել հասարակութեան: Մեր խանութի հասցէով ստանում էինք հայերէն թերթեր Թեհրանից: 1944 թուին հայրս արդէն 89 տարեկան էր, այդ պատճառով գիւղապետի պաշտօնը սիրով յանձնեց ինձ, որ հազիւ 24 տարեկան էի: Ունէինք 2 յարմարաւէտ բնակարան, որոնցից մէկում բնակւում էր մեր ընտանիքը, իսկ միւս շէնքը յատկացրել էինք գինեգործութեան: Ունէինք խաղողի ընդարձակ այգիներ, որոնցից ստացուած խաղողից պատրաստում էինք անարատ գինի: 1945 թուին ամուսնացայ մեր համագիւղացիներից Ղազար Իսկանդարեանի դստեր Սառայի հետ: Աներհայրս բաւական զարգացած մի անձ էր: Ունեցանք վեց զաւակներ 2 տղայ եւ 4 աղջիկ: Մեծ տղաս Անդրանիկը ուսումնասէր անձնաւորութիւն էր, որն խթանեց իր 2 զաւակներին, ստանալու համալսարանական կրթութիւն: Միւս տղաս՝ Էդիկ Նազարեանը փոքր տարիքից Ն ուիրուեց ազգային-հասարակական աշխատանքներին եւ այսօր Թեհրանից վերահասու է Քալաւա գիւղի Ս. Յակոբ եկեղեցու վիճակին: Աղջիկներս երկուսը հաստատուել են Կլէնտէյլ: Ունեն զաւակներ, որոնք հակառակ շատ շատերի տանը եւ ամէնուր խօսում են հայերէն: Միւս աղջիկներս Թեհրան են ապրում: Ունեմ 15 թոռներ:*

*Գիւղում բացի իմ գիւղապետի պաշտօնից, ես զբաղւում էի գինեգործութեամբ: Մեր եւ Ջանադ աւանի այգիներից խաղողները քաղում, եւ 7-8 օր փռում էինք մաքուր յատակին, թողնում էինք արեւի տակ: Արեւի ջերմութիւնից մասամբ նուազում էր խաղողի ջրային քանակը եւ աւելի քաղցրանում: Լսել էի որ անմրցելի գինիներ են պատրաստւում Ֆրանսայում: Տարիներ յետոյ երբ թրանզիթ մեքենաների վարորդ դարձայ, շրջեցի ամբողջ Եւրոպական երկրները, ըմպեցի տեղի գինիները եւ զգացի գինու տարբերութիւնը: Մեր շրջանի գինին անմրցելի էր: Այդ վկայում էին նոյնիսկ եւրոպացիները, որոնք առիթ էին ունենում ըմպելու մեր գինուց:*

*Եւրոպական երկրների խոնաւ օդը թոյլ չի տալիս որ գինին իր բնական համն ունենայ: Խոնաւ միջավայրում լաւ եւ ընտիր գինի հնարաւոր չէ պատրաստել: Իսկ մեր շրջանում չոր եղանակի պատճառով երկար տարիներ գինին մնում էր քաղցր եւ հաճելի: Մեզ մօտ գինին բնաւ չէր թթւում: Տիկնոջս օգնութեամբ տարեկան 20 հազար շիշ գինի էինք պատրաստում եւ պահում էինք կարասների մէջ երկար տարիներ: Գինիի պատրաստումը ունի զանազան նրբութիւններ: Կարասից կարաս փոխադրումը պիտի անել զգուշութեամբ: Շատ երկրներում ինչպէս նաեւ Հայաստանում, քաղցրահամ գինի ունենալու համար շաքարաւազ է գործածւում: Իսկ քաղցր գինի պատրաստելու համար, մենք խաղողը փռում էինք արեւի տակ, օրեր յետոյ քամում: Եւրոպացիները երբեմն գալիս էին մեր շրջանները անարատ եւ բնական գինիներ գնելու համար:*

*Այդ օրերին մենք տանը նաեւ օղի էինք պատրաստում: Մեր շրջանում գազատար խողովակներ տեղադրող օտար մասնագէտները լսելով մեր անարատ գինու եւ օղու համբաւը, գալիս էին մեզ մօտ: Խմիչքները համտես անելուց յետոյ գնում ու տանում էին իրենց հետ: Թեհրան հաստատուելուց յետոյ պատրաստում, խառնելով մէջը նուռի ծաղիկ, սմբուլ, ուռց, դարչին, հել, մեխակ, կեռաս, դեղձ եւ մի քիչ շաքար, որից ստացւում էր 55 աստիճան ալքոհոլ պարունակող օղի, որոնց շշերի բերանները խցանելով, դրանք երկու ամիս թողնում էինք արեւի տակ: Այդպիսով օղին ստանում էր առաջնակարգ վիսկիի համ ու բոյր: Մեր խմիչքների համբաւը հասել էր Թեհրան, Ահ, Աբադան, Խորամշահր քաղաքները եւ մանաւանդ մեր գիւղին կից Շազանդ աւանը, որտեղ հիմնուած էր Իրանի շաքար արտադրող ամենամեծ գործարանը: Ես որպէս Քալաւայի գիւղապետ եւ առաջին կարգի գինեգործ, ստիպուած էի մեր արտադրած խմիչքներից նուիրել պետական պաշտօնեաներին, մեր շրջանի գինուորականներին, որոնք փոխադարձաբար օգնում էին մեր գաւառի հայութեանը: Զանազան դատեր եւ վէճեր անմիջապէս հարթւում եւ աւարտւում էթին ի նպաստ հայ գիւղացիութեան: Այսքանը մեր գինեգործութեան մասին:*


## ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**
**(626) 797-7680 (626) 398-0506**


## ԵՂԵՌՆԱԿԱՆ ՊՈԷՄ
### ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲՈՅԱՄԵԱՆ

Նայիրեան չքնաղ մի պայծառ երկիր
Եւ բազմաչարչար, տառապած մի ազգ:
Նա մեր հոգում է, բոլորիս սրտում
Գոյատեւում է եւ կը գոյատեւի դարեր շարունակ:

Եւ մարդկային ճիշտ, խորն իմացութեամբ
Ուզում ենք հասկացնել ամբողջ աշխարհին,
Քնած աշխարհին այս խելակորոյս
Որ չի դիմանում էլ հայի հոգին:

Բացէք ձեր խղճի եւ խճմտանքի
Պատուհանները շատ վաղուց փակուած,
Այնտեղ կը տեսնէք որքան մոռացուած, չբացայայտուած
Գաղտնիքներ են սպասում լուծումին արդար:

Դուք ձեզ համարում էք ազգեր զարգացած
Ազգեր, որ տեղեակ էք ողջ կատարուածին,
Ազգեր, որ նպաստեցիք վայրագ գազանին
Բարձրացնելու սուրը հայութեան գլխին:

Ասացէք խնդրեմ, ո՞ւր են մեր փայլուն
Եւ լուսաճաճանչ ճակատները լայն,
Որ այսօր արդէն աստղեր դարձած
Մեզ յիշեցնում են եղեռնը դաժան:

Նրանց խեղդեցիք, ողջակիզեցիք
Անապատների տաք աւազների ամայութեան մէջ,
Կտրեցիք նրանց լուսաւոր մտքի թռիչքը վսեմ,
Դարձնելով նրանց գիշատիչների բաժին հասարակ:

Իբրեւ կիրթ ազգեր, ինչպէս պատահեց
Կորցրեցիք յանկարծ ձեր խիղճը այդքան,
Ծառ ու ծաղկանքի զարթօնք ամիսը
Դարձրեցիք դժոխք հայ ազգի համար:

Ու մի վայրկեանում փոխուեց ամէն ինչ
Գարնան զարթօնքը դարձաւ թխպոտ ամպ,
Արիւնը հոսեց գետակի նման
Արեան շիթերով ծածկուեց սուփրան:

Լռեցին եկեղեցիների զանգերը հնչուն
Լռեց ծերունու երգը հնամեայ,
Ջահել ու ջիւան քաջ տղամարդկանց
Այրեցիք եկեղեցիներում մեր աւանդական:

Մէկ եւ կէս միլիոն անմեղ ժողովուրդ
Քշեցիք Տէր Զօր, քաշեցիք սրի,
Եւ արիւնարբու գազանների պէս
Յագուրդ տուիք ձեր պապակած սրտին:

Որտե՞ղ է լսուած, ով իմ Տէր Աստուած
Այսպիսի դաժան մի ողբերգութիւն,
Որ մօրն յօշոտեն եւ բռնաբարեն,
Անմեղ մանկիկի աչքերի առաջ:

Խեղդեցին մանկանը հենց իր մօր գրկում
Յագեցրին վաւաշոտ կիրքն ու ծարաւը,
Իսկ մանկան ձեռքը նուրբ ու փամփլիկ
Մնաց մայրիկի կրծքին քարացած:

Կարծում էին թէ լուծեցին հարցը
Իրենց դաւադիր, դաժան եւ խենէշ մտքի,
Բայց նրանք միշտ կան եւ պիտի ապրեն
Մինչեւ որ հասնի ժամը յարութեան:

Այսօր նրանք այդ գազանները
Արդարանում են ինչպէս հրեշտակներ,
Իսկ քաղաքակիրթ եւ էլ մեղսակից
Կիրթ երկրները, շոյում են նրանց յոգնած ուսերը:

Ուզում ենք սանձել թռիչքը մեր մտքի
Ուզում ենք սանձել խռովքը մեր հոգու,
Ուզում ենք ներքուստ մեզ հանգստացնել,
Բայց գիտենք նաեւ, որ կատարուածը չափից էր աւել:

Իսկ աշխարհին այսօր, լուռ ու անտարբեր
Ձեւանում են խուլ, ձեւանում յիմար
Եւ գիտակցաբար չեն ուզում լսել
Հայ ժողովրդի պահանջը արդար:

www.massisweekly.com

# ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՀԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ
## ԵՐԱԺԻՇՏ ԽՄԲԱՎԱՐ 1924-2007

*ԴՈԿՏ. Տ. ԶԱՒԷՆ ԱՒ. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*



*Հայրենի արուեստագէտ, երաժիշտ եւ ղեկավար Վլադիմիր Առաքելեան Լոս Անճելըսի մէջ իր մահկանացուն կնքեց 2007 թուի Ապրիլի 15ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Հանգուցեալը իր կեանքի բեղուն տարիները կատարելագործեց Հայաստանի մէջ, ըլլալով աշակերտն ու գործընկերը յայտնի երաժիշտ Թաթուլ Ալթունեանի: Ծնած էր 1924 թուին Կիսլավոդսկ, Կովկաս, Ասիա եւ Աւետիս Առաքելեաններու յարկին տակ: Ընտանեօք, ծնողաց քրոջ եւ եղբօր հետ միասին, Իրան գաղթած են 1929 թուին եւ բնակութիւն հաստատած նախ Ռեշտ քաղաքի եւ ապա՝ Թեհրանի մէջ:*

*Թեհրանի մէջ արդէն Վլադիմիր կանուխ տարիքէն յայտնաբերած է երաժշտութեան հանդէպ յատուկ սէր, եւ երբ 1946 թուին Առաքելեան ընտանիքը Հայաստան գաղթեցին, Երեւանի մէջ իսկոյն կատարելագործեց իր երաժշտական տաղանդը յատուկ ուսումնառութեամբ Կոմիտասի անուան Կոնսերվատորիայի մէջ 1946էն 1951, աշակերտելով հանրածանօթ երաժիշտ ու ղեկավար Թաթուլ Ալթունեանի, յաջողութեամբ աւարտելով դիրիժորական մասնագիտական բաժինը: Մինչ կ'ուսանէր, Վլադիմիր 1950 թուին ամուսնացաւ Լիբանանէն հայրենադարձ Յասմիկ Տարաքճեանի հետ, որոնք 1955 թուին բախտաւորուեցան Ռուբէն անուն մանչ զաւակով մը:*

*Վլադիմիր նախ Լենինականի երաժշտական ուսումնարանի մէջ աշխատանքի անցած է որպէս խմբավարական բաժնի վարիչ եւ մասնագիտութեան դասատու: 1952-1959 աշխատած է Կիրովականի Միասնիկեանի անուան քիմիական կոմբինատի մշակութային պալատին մէջ որպէս երգեցիկ խումբի գեղարուեստական ղեկավար, կազմելով քառաձայն երգչախումբ որ իր կատարողական մակարդակին համար պարգեւատրուած է Սովետական Միութեան պատուագրով: Իսկ 1955 թուին Առաքելեան ստեղծած է հայկական ժողովրդական երգի եւ պարի անսամբլ որ տարի մը ետք մասնակցած է համամիութենական գեղարուեստական եզրափակիչ համերգին՝ Մոսկուայի մէջ: Միանգամայն Վլադիմիր 1952-1965 թուականներուն ղեկավարած է Կիրովականի երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժինը, երբ արդէն նոյն տարին Երեւան տեղափոխուած էին ընտանեօք, ուր մշակոյթի նախարարութեան հրաւէրով հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլի աշխատանքի լծուած որպէս խմբավար: Նոյն տարիներուն երաժշտական յայտնի գործունէութիւն ծաւալած է եւ կազմակերպած բազմաթիւ համերգներ, արժանանալով բարձր ուշադրութեան եւ յարգանքի:*

*Վլադիմիր Առաքելեան մինչեւ 1982 աշխատած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Մանկավարժական Ինստիտուտին մէջ որպէս գեղարուեստական դաստիարակ, ղեկավարելով բազմաթիւ ինքնագործ երգչախումբեր, տալով նաեւ շարք մը դասախօսութիւններ «Գիտելիք» ընկերութեան կազմակերպութեամբ, արժանի դառնալով իր համեստ եւ տաղանդաւոր ներդրումներուն որպէս վարձատրութիւն պատուոյ գիրերու, դիպլոմներու եւ մեդալներու:*

*1982 թուին Վլադիմիր, տիկինը Յասմիկ, եւ որդին Ռուբէն, ընտանեօք Ամերիկայի Միացեալ Նահանգներ գաղթած են: Հակառակ անոր որ օտար ափերու վրայ չկար հայկական արմատներն ու լեզուն բաւարար չափով, Վլադիմիր Առաքելեանի պրպտուն հոգին չկաշկանդուեցաւ, եւ կարճ ժամանակի ընթացքին ան սկսաւ գործի եւ նուիրեալ աշխատանքի: Իր ջանքերով ստեղծուեցաւ մանկական երգչախումբ, միեւնոյն ատեն դաշնամուրի եւ դաշնաւորումի (հարմոնիայի) դասեր աւանդելով ու հասցնելով բազմաթիւ յաջողակ աշակերտներ: Երգն ու երաժշտութիւնը եղան իր կեանքի անբաժանելի մասնիկը:*

*Բնաւորութեամբ կատակասէր, ունէր ընկերային լայն շրջանակ. ունէր մանաւանդ քրիստոնէական անսասան հաւատք, որուն ապացոյցը եղան իր գրած բազմաթիւ աղօթքները, ուր տեղ մը գրած է.*

*«Կենդանի եմ ես Յիսուսով, նրա կենդանութեամբ է իմ կենդանութիւնը պայմանաւորուած: Մեծ գին ունի այն արեան գինը որ Յիսուս տուած է յանուն փրկութեան: Ես խաչուեցի Յիսուսի հետ: Այսօրուայ կենդանի իմ մարմինը ապրում է յանուն հաւատի, յանուն Որդուն Աստծոյ որ իր կեանքը տուեց յանուն իմ փրկութեան բազում մեղքերի: Աստուած իմ յանուն քո մեծ սիրոյ ես համբարձուեցի Քրիստոսի հետ»:*

*Հիւանդանոցում Վլադիմիրի վերջին թոշակի կարգը երբ կատարեց Տէր Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան, ընթերցեց նաեւ Վլադիմիրի գրած աղօթքներէն մին: Իր կեանքի վերջին տարիներուն Վահան Առաքելեան հակառակ ուղեղի կաթուածի ծանր վիճակին, մնաց դարձեալ ոտքի, ընտանեկան հաւաքոյթներուն մասնակից դարձաւ եւ իր ամուր կամքի շնորհիւ յաղթահարեց զայն, վերադառնալով իր բնականոն ստեղծագործական կեանքին, որը սակայն աւաղ երկար չտեւեց: Վլադիմիր տարւոյս Մարտի վերջին այլ հարուած մը եւս կրեց որուն չկարողացաւ յաղթահարել դժբախտաբար ու մահացաւ Ապրիլի 15-ին:*

*Հանգուցեալի կորուստը կը սգան իր այրի տիկինը՝ Յասմիկ եւ որդին՝ Ռուբէն Առաքելեանները, ու Առաքելեան, Աւագեան, Արզումանեան, Մկրպլեան, Տարաքճեան, Մովսէսեան եւ Մալայեան ընտանեկան պարագաները:*

*Վլադիմիր Առաքելեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Գէորգ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ ձեռամբ հոգեւոր հովիւ Տ. Զարեհ Քհնյ. Մանսուրեանի եւ նախագահութեամբ Տէր Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեանի: Յաւարտ թաղմանական կարգին ընտանիքին կողմէ հոգեճաշ տրուեցաւ Կլենտէյլի Ֆինիշիա ճաշարանին մէջ:*

# ՎԱՌ ՊԱՀԵՆՔ ՅԻՇԱՏԱԿԸ

*ԱՐՄԷՆ ՏԱՏՈՒՐ*

*Մարդիկ տարբեր սովորութիւններ ունին հանգուցեալի մը յիշատակը վառ պահելու: Ողբալը ամենէն սովորականը, հասարակն է: Իմացիր իմ գոյութիւնը յիշելու որ անգամ կը հրճուին...: Այս կերպն ալ սակայն բոլորովին անտրամաբանական չէ, քանի որ մտածելակերպեր կը տարբերին մէկը միւսէն:*

*Հնդիկները կը հրկիզեն հանգուցեալին մարմինն ու մոխիրը կը թափեն Գանգէս գետը որպէսզի հասնի անմահութեան: Ուրիշներ մոխրացած աճիւնը կը հաւաքեն կամ կ'ամփոփեն «դամբան»ի մը մէջ որ յաճախ իրենց տուներուն մէկ պատուոյ անկիւնը կը գրաւէ: Ճաբոնցիներն ու չինացիներն ալ ունին նման սովորութիւն մը ու զայն հաստատեր՝ նախնեաց պաշտամունքի աստիճանին:*

*Իսկ հին եգիպտացիք անեղծ կը պահէին մարմինը հանգուցեալին, որովհետեւ կը հաւատային հոգին պէտք ունի պատեանի մը՝ վերապրելու համար:*

*Որքան ճիշդ էին այս մտածելակերպերը: Հոգիի անմահութեան վսեմ գաղափարին քով սակայն ատոնք կը նսեմանան:*

*Անմահութեան մեր ըմբռնումը կը չափաւորուի երկու զօրաւոր ազդակով. միտքը եւ սիրտը: Կշիռ որ կը «չափէ» հանգուցեալին «անմահութիւն»ը:*

*Մտածողը անհուննապէս տարբեր է, վեր չմտածողէն: Սիրողը՝ չսիրողէն: Անհուն մը կայ այս զոյգերուն միջեւ, անգամ յաւիտենականութիւն մը:*

*Ու որքան սխալ է խօսիլ տաղերգութեան մասին՝ Վահան Թէքէեանի, երբ ան կ'ապրի մեր մէջ, մեր հոգիին մէջ՝ իր տաղերով անմահ:*

*Խօսքինք իր ծննդեան մասին մի միայն: Ու փոխանակ տարեդարձէ տարեդարձ պատուելու յիշատակը մեծ հայուն, ընտրենք կերպ մը աւելի ազնիւ կարդան Վահան Թէքէեանը, իր քերթուածները, ունենանք պուտ այն ճրագէն որ իր միտքն է, իր հոգին, իր սիրտը:*

*Մէյ մէկ պտուղ գոյնզգոյն՝ ամբողջ բառերդ ահա, հիւթեղ բառերդ զոր այնքան հասունցուցին...*

*Թէքէեան ամբողջ տարիներ մնաց քաշուած մէջը իր խցիկին մենութեան, հեռու խնճոյքներէ, սէրերէ: Փնտռենք սէրը երգին մէջ:*

*«Տարիներով չբացուած՝ սիրոյ պահեստ մ'ունիմ ես*

*Ու չանցած տարիներ՝ ունիմ պահանջ մը սիրոյ...»:*

*Ու Թէքէեանի անհատնում սէրը կը փոխադարձուի միայն սիրելով Թէքէեանը, զի «Միջոցին մէջ իր թափառումը սկսող» հոգին, «սիրով միշտ լեցուն, միշտ սիրոյ ծարաւի» այդ է որ կ'ուզէ:*

*Սիրենք Թէքէեանը ու իր մէջ մեր արուեստի ու գրիչի բոլոր մարտիկները, քիչ մ'աւելի տաք վերաբերում ունենանք անոնց հանդէպ, լաւագոյն ձեւը յարելու եւ յիշելու մշակները մեր գրականութեան:*

*Ու թող անոնց մտքի լոյսէն ունենանք միշտ մեր քով ճրագ մը պլպլացող:*

## ԶԳՈՒՇԱՑԷ՛Ք ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՎՆԱՍԱԿԱՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՉԱՐ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐԻՑ

*Շարունակուած էջ 8-էն*

*եօթանասունեօթ տարեկան է, իր հերթին օգտագործում է «Ջերմուկ» հանքային ջուրը եւ իմ գիտակցական յիշողութեան մէջ ես չեմ յիշում այնպիսի մի օր, երբ նա խմած չը լինի այդ կենարար, հրաշագործ ջրից: Այսքանից յետոյ ասեմ, որ ոչ հայրս եւ ոչ էլ մայրս «Ջերմուկ»-ի օգտագործումից որեւէ բացասական հետեւանք չեն նկատել:*

*Ամփոփելով շարադրանքս, կոչ եմ անում հայ ժողովրդին, ամէն հնարաւոր միջոցներով տէր կանգնել մեր ազգային արժանապատուութեանը, այս դէպքում մեր ազգային խորհրդանիշներից մէկը հանդիսացող «Ջերմուկ»-ի արժանապատուութեանը, որը փորձում են արատաւորել նրանք, որոնց դունչը խաղողին չի հասնում եւ նրանք այդ թերութիւնը աննկատ դարձնելու համար յայտարարում են, թէ այն խակ է:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year) * $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------

**Address:** ----------------------------------------

**City:** --------- **State:** --------- **Zip Code:** ------

**Country:** -------------

**Tel:** ----------------------- **Fax:** ------------------------

# ՌԱՖԱՅԵԼ ԴԵ ՆՈԳԱԼԵՍ ՄԵՆԴԵՍԸ ԵՒ ՄԵՆՔ

*Շարունակուած էջ 15-էն*

ի վեր իրենց մտքում ծրագրուած հայ ժողովրդի ցեղասպանութիւնը:

Վենեզուելացի գրողը, մի կողմից, ընդունում է, որ «Միութիւն եւ առաջընթաց» կոմիտէն ունէր հայերի ցեղասպանութեան յստակ ու որոշակի ծրագիր, միւս կողմից զարմանք է յայտնում, որ այդքան մեծաթիւ մարդիկ արժանի դիմադրութիւն ցոյց չեն տուել թուրքական ոստիկանութեանը, «Համիդիէ» աւազակախմբերին, որոնք հաւաքագրուած էին թուրք, քուրդ եւ չերքեզ ազգաբնակչութեան ամենահետամնաց եւ ստորին խաւերից: Բայց յաջողութեան գաղտնիքը անսպասելիութեան եւ դահիճների ուխտադրժութեան եւ զանգուածային վարքի որոշ օրինաչափութիւնների նրանց ստոյգ նկատառումների մէջ էր: Նրանք անմիջապէս ժողովրդին զրկեցին ղեկավարութիւնից, միաժամանակ ձերբակալելով եւ ոչնչացնելով ժողովրդի հոգեւոր եւ քաղաքական առաջնորդներին, ինչպէս եւ մտաւորականութեանը: Տղամարդիկ կանչուեցին զինուորական ծառայութեան եւ բանակում անզէն չկարողացան արժանի դիմադրութիւն ցոյց տալ: Իսկ յետոյ դահիճները առանձին ոչնչացրին ծերերին, կանանց ու երեխաներին: Թւում է, կար եւս մի հոգեբանական գործօն, որ դիւրին էր դարձնում մարդասպանների խնդիրը. բազում զոհեր չէին սպասում այդպիսի գազանութեան, այդպիսի գազանութիւնների փանթիւրքիզմի քարոզչութիւնից բթացած եւ անպատիժ թալանի, կողոպուտի եւ անարգումի հնարաւորութիւն ստացած թուրքերից, քրդերից եւ չերքեզներից, որոնց հետ հայերը դարերով ապրել էին միատեղ: Բայց այն վայրերում, ուր հայերը ժամանակին գիտակցել են իրենց վիճակի լրջութիւնը եւ որտեղ գտնուել են առաջնորդներ, այդ վայրերում նրանք յաղթել են: Այդպէս է եղել, օրինակ, Վան քաղաքի պաշտպանութեան ժամանակ, երբ ծերերը, կանայք եւ երեխաները փոքրաթիւ տղամարդկանց հետ ինքնապաշտպանութեան կոմիտէի ղեկավարութեամբ, որ գլխաւորում էր բժիշկ Արամը, կարողացան դիմակայել կազմակերպուած զօրքերին եւ գազանացած «համիդիէ» աւազակախմբերին, որոնց ղեկավարում էին պրոֆեսիոնալ զինուորականներ, որոնց թւում էր Ռաֆայէլ Դէ Նոգալեսը, որ ռազմական կրթութիւն էր ստացել Եւրոպայում: Նոյն բանը եղաւ եւ Մուսադաղում, Սասունում եւ այլ վայրերում:

Թուրք որոշ պաշտօնական պատմաբանների ձգտումը հայ ժողովրդի առանձին օջախների դիմադրութիւնը ներկայացնելու իբրեւ «քաղաքացիական պատերազմ», մեղմ ասած, զուրկ է հիմքերից: Իրականում անզէն ժողովրդի դէմ կիրառուել է պետութեան ողջ ոչնչացնող ուժը, որ ուղղորդում էին երիտթուրք-դեռնմէները: Եւ հայ ժողովրդի ոչնչացումը, որ սկիզբ էր առել Ատանայում, շարունակուեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եւ աւարտուեց մասոնների երկրորդ էշելոնի՝ իշխանութեան գալու ժամանակ արդէն յիշուած Մուսթաֆա Քեմալի գլխաւորութեամբ: Նրան տուեցին «Թուրքերի հայր» յորջորջումը, թեպէտ ինչպէս վկայում է ամերիկեան ուսումնասիրող Արմստրոնգը, Քեմալի բարոյական կերպարը բացարձակապէս չէր համապատասխանում մահմեդական հաւատի իսկական արժէքներին:

Երիտթուրքերին արժէ «տեխնիկական նորաբանութեան» արտօնագիր տալ՝ «լուսաւոր» իդէալների համար պայքարի քողի տակ, յենուելով ընդհատակեայ կազմակերպութեան եւ դրա միջազգային ցանցի վրայ, զաւթել պետական իշխանութիւնը եւ օգտագործել այն իբրեւ զէնք ու միջոց մրցակիցների եւ քաղաքական հակառակորդների զանգուածային ոչնչացման համար: Միայն թէ իրենց ինքնահրապուրանքի մէջ նրանք չկանխատեսեցին դրա բոլոր հետեւանքները, այն, որ այդ միջոցը միշտ նոյն ձեռքերում չի լինի:

Առաւել կամ պակաս նման ձեւով դեռնմէների սցենարը կրկնուեց նաեւ Ռուսաստանում: Սկզբում կադետական կուսակցութեան եւ օկտեաբրիստների մասոնները, որոնք ուսումնառութեան էին գնում երիտթուրքերի մօտ, տապալեցին օրինական թագաւորին, յետոյ հերթը եկաւ երկրորդ ջոկատի: Պարւուսը, որ «Միութիւն եւ առաջադիմութիւն» կոմիտէի տնտեսական հարցերի խորհրդականն էր, ֆինանսաւորում էր կայսերական Ռուսաստանի դէմ գործող մասոններին եւ գործում «Մարդկանց եւ Կառավարիչներ» ... պատերազմի տարիներին պարենամթերքի խարդախաւաճառքով, կնքուած վագոնով Պետրոգրադ բերեց յեղափոխականների ջոկատը: Եթէ փորձենք վերլուծել-պարզաբանել նրանց ազգային պատկանելութիւնը եւ մասոնական օթեակների անդամ լինելը, ապա պարզ կը դառնայ, թէ ինչ խնդիրներ պէտք է իրագործէին նրանք, որոնք դրել էր նրանց առջեւ համաշխարհային եռնաբեմը: Նրանք Ռուսական կայսրութեան մէջ հրահրեցին քաղաքացիական պատերազմ, որը վերածուեց ռուս ժողովրդի ցեղասպանութեան: Համեմատենք ՌԿԿ(բ) ԿԿ 1919 թուականի Յունուարի 29-ի հրամանագիրը, որ ստորագրել էր Յակով Սվերդլովը «կազակութեան բոլոր ղեկավարների» «գլխովին ոչնչացման» մասին, Թալաաթի այն հրամանի բովանդակութեան հետ, որ բերում է Նոգալեսը՝ «այրել, ոչնչացնել, սպանել»: Եւ այն հարստութիւնը, որ կուտակել էին Ռուսական կայսրութեան ժողովուրդները, թալանում եւ իւրացնում էին զանազան համայնքները եւ այլք դեռնմէի դեղատոմսերով:

Ռուսական կայսրութեան եւ հայ ժողովրդի հաշուին համաշխարհային եռնաբեմը փրկեց կործանման եզրին հասած մասոնների իշխանութիւնը Թուրքիայում: Բոցավառ յեղափոխական, բոլշեւիկ եւ մասոն Լեւ Տրոցկին դեռեւս 1918 թուականի Յունուարին հրաման է արձակում Կովկասեան ճակատից ռուսական բանակի արձակման մասին: Հենց նա էլ Թալաաթի հետ գործարք է կնքում Կարսը, Արդահանը եւ Բաթումը թուրքերին յանձնելու մասին: Նրա այդ գործարքին օրինականութեան տեսք հաղորդեց, առանց հաշուի առնելու հայ ժողովրդի կարծիքը, 1921 թուականի պարտադրեալ Մոսկովեան պայմանագիրը: Համաշխարհային եռնաբեմի համագործակցութեամբ ի չիք դարձրին Սեւրի պայմանագրի պայմանները պատմական Հայաստանի տարածքները Թուրքիայից անջատելու մասին: Աւելին, Ռուսաստանին պարտուած Թուրքիան նոյն Ռուսաստանից ստացաւ 20000 (քսան հազար) քառ. կմ պատմական Հայաստանի տարածք, որ նախկինում Ռուսական կայսրութեան կազմի մէջ էր մտնում: Ի հաճոյս քեմալական Թուրքիայի Ատրպէյճանին յանձնուեցին Նախիջեւանի մարզը եւ Լեռնային Ղարաբաղը: Սրանից բացի, 1920-22 թթ. Լենինի եւ Տրոցկու էմիսարները Քեմալին, այն ժամանակ, երբ նա կռիւ էր մղում ուղղափառ Յունաստանի դէմ, մատակարարեցին վիթխարի քանակութեամբ զէնք ու ռազմամթերք (40 հազար հրացան, հարիւրաւոր գնդացիրներ, 54 հրանօթ արկերի հազարաւոր հաւաքակազմով եւ այլն, եւ այլն), ինչպէս նաեւ նաւթ, բենզին, կերոսին:

Յունաստանի դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան եւ ԱՄՆ-ը, ուխտադրուժ կերպով դաւաճանեցին Միութեան իրենց դաշնակցին եւ վճռականօրէն հրաժարուեցին օգնութիւն ցոյց տալուց:

Իսկ Քեմալին Տրոցկու օգնութիւնը գալիս ու գալիս էր: Ֆրունզէն, Մդիւանին եւ Արալովը գործուղւում են Թուրքիա գործնական օգնութիւն ցոյց տալու համար: Այն ժամանակ, երբ Ռուսաստանում մոլեգնում էր դաժանագոյն սովը, Թուրքիան բոլշեւիկներից ստացաւ տասը միլիոն ռուբլի ոսկով: Յատկապէս այդ ժամանակ Ռուսաստանում սկսուեց ուղղափառ եկեղեցիների եւ եկեղեցու ունեցուածքի համատարած կողոպուտը:

Քեմալը «արժանապատիւ ձեւով» գնահատեց իր ցեղակից-բոլշեւիկների այս անգնահատելի օգնութիւնը, 1921 թուականին Սեւ ծովում խեղդամահ անելով Թուրքիայի կոմկուսի ամբողջ կենտրոնական կոմիտէն, որ ժամանել էր սովետական Ռուսաստանից:

Երիտթուրքերի սցենարով էր գործում եւ Հիթլերը: Որպէսզի հասնի իշխանութեան, նա օգտագործեց այն նուաստացումը, որ կրեցին գերմանացիները Վերսալից յետոյ եւ յատկապէս Վերսալեան Հանրապետութեան քաղաքականութիւնից: Բայց այս անգամ պետական մեքենան գործեց ընդդէմ հրեաների: Եւ ո՞վ է կրում մեծ պատասխանատուութիւնը միլիոնաւոր անմեղ հրեաների արտաքսման ու ոչնչացման համար՝ Հիթլե՞րը, թէ՞ ցեղասպանութիւնը յայտնագործող երիտթուրք-դեռնմէները:

Ներկայ ժամանակում համաշխարհային եռնաբեմը, կիրառելով դարերով մշակուած մեթոդները, ջանում է քրիստոնեաներին եւ մահմեդականներին հանել միմեանց դէմ: Լիբանանի, Հարաւսլաւիայի, Իրաքի քաղաքացիական պատերազմները անհամար աղէտներ են բերել եւ շարունակում են բերել այդ երկրների ժողովուրդներին: Նոյն այդ սցենարով ապակայունացւում է իրավիճակը Իրանի եւ Սիրիայի շուրջ: Իսկ Մարգարէի վիրաւորեցուցիչ ծաղրանկարների հրապարակումը անկարելի է պրովոկացիա չանուանել: Եւ հայերի ցեղասպանութիւնը որոշ պատմաբաններ ջանում են ներկայացնել իբրեւ միջկրօնական բախման հետեւանք: Բայց այդ ջանքերը անկար ու զուր են: Իրականում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրագործուած ցեղասպանութիւնից եւ դրան յաջորդած ժամանակներում փրկուած հայերին եղբայրների պէս ընդունեցին Իրանի, Սիրիայի, Լիբանանի եւ արաբական այլ պետութիւնների ժողովուրդները: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանայ այդ օգնութիւնը:

Բարձրագոյն արդարութիւնը այն է, որ թափուած անմեղ արեան համար միշտ հատուցում կը լինի: Ժամանակակից Թուրքիային, եթէ նա չի ուզում ճանաչել ցեղասպանութեան փաստը, մեծ փորձութիւններ են սպասում: Իր գոյութեան մօտ ութսուն տարիների ընթացքում այդ երկրում գոյութիւն ունեցող ռազմական դիկտատուրան հնարաւոր բոլոր մեթոդներով «եւրոպականացրել է» թուրքերին, կտրելով նրանց իրենց արմատներից: Չի ընդհատւում քրդերի բռնի թուրքացման քաղաքականութիւնը: Աջակցութեամբ եւ պաշտպանութեամբ աշխարհի նոյն ուժերի, որոնք օգնեցին երիտթուրքերին իշխանութեան գալու, արւում է ամէն ինչ, որպէսզի թոյլ չտրուի Հայոց ցեղասպանութեան համաշխարհային ճանաչումը: Բայց Թուրքիայում հակասութիւններ են հասունանում: Իսկ թէ ինչպէս կը լուծուեն դրանք, կախուած կը լինի, մասնաւորապէս, ե՛ւ գղջումից ու ապաշխարումից, ե՛ւ Թուրքիայի ներկայ կառավարիչների կողմից պատմական սխալների ժամանակին ուղղումից:

Ահա թէ ինչպիսի եզրայանգումների է բերում «Թափառական ասպետ»-ի՝ վենեսուելացի գրող Ռաֆայէլ Դէ Նոգալես Մենդեսի յուշագրութեան ընթերցումը: Դրա համար էլ ժամանակին ոչնչացրել են «Չորս տարի մահիկի ներքոյ» գրքի տպաքանակը, իսկ սպաներէն լեզուով վերջին հրատարակութիւնը եղել է 1936 թուականին: Արիութեան եւ ինքնազոհութեան շնորհիւ Հայոց Մեծ եղեռնի ականատես Միհրան Քեհեանի, որ տարագրուել է Վենեսուելա, պահպանուել է վերջին հրատարակութեան մէկ օրինակը: Այս գրքի ռուսերէն թարգմանութիւնը իրագործուել է առաջին անգամ:

Նոգալեսի նոթերի ճակատագիրը մեզ համոզում է, որ Աստուածային նախախնամութիւնը պահպանում է իսկական վկայութիւնը: Եւ 20-րդ դարի Դոն Կիխոտի ցուցմունքները կը հնչեն այն դատարանում, որը, վերջապէս, արժանին կը հատուցի թէ՛ դահիճներին, թէ՛ զոհերին:

## ԱՊԱՔԻՆՈՒՄ

*Ընկերուհի Լուսին Պոյամեանի յաջող գործողութեան ենթարկուելուն առթիւ մեր շուտափոյթ ապաքինումը կը յայտնենք սիրելի ընկերուհիին, որ հանգստեան շրջանը կը բոլորէ իր տան մէջ:*

*«Մասիս»*

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական
Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցէով
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

# ՄԱՀԱԶԴ



*ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆ*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, զաւկին, եղբօր, գերիին եւ հարազատին՝ ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Ապրիլ 27, 2007ին անակնկալ մահով:*

*Եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 2 Մայիս 2007, առաւօտեան ժամը 11ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, իսկ Թաղման կարգը Փասատինայի Moutain View գերեզմանատան մէջ:*

*Սգակիրներ՝*

*Այրին՝ Տիկ. Ազնիւ Թոմոճեան եւ զաւակունք Գոհար եւ Էնթընի*

*Հայրը՝ Պրն. Անդրանիկ Թոմոճեան*

*Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարի Փամպուգճեան եւ զաւակունք (Հալէպ)*

*Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Վարդուհի Սաղաթեան*

*եւ զաւակները Ռաֆֆի, Անդօ եւ Կարպիս*

*Տէր եւ Տիկ. Ժոզէ եւ Աղաւնի Զորպաճեան*

*Տէր եւ Տիկ. Յարութ եւ Մէրի Մարաշլեան եւ դուստրը*

*Տէր եւ Տիկ. Կարօ Փամպուքճեան (Պէյրութ)*

*Տէր եւ Տիկ. Անդրանիկ Զարմինեան (Քուէյթ)*

*Տէր եւ Տիկ. Շահէ Փամպուքեան (Հալէպ)*

*Տէր եւ Տիկ. Խորէն Պէտէլեան (Հալէպ)*

*Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Սեւան Ջոմճեան (Հալէպ)*

*Քէթէնճեան ընտանիք (Գանատա)*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Փասատինայի Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ երկարամեայ Հ.Մ.Մ.ի վարչութեան անդամ Ընկ. ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆի վաղաժամ մահուան տխուր առթիւ:*

*Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի տիկնոջ՝ Ազնիւ Թոմոճեանին, հօր, զաւակներուն Գոհարին եւ Էնթընիին, հարազատներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆի մահուան տխուր առթիւ Կլէնտէյլի Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը կը յայտնէ իր ցաւակցութիւնները տիկնոջ՝ Ազնիւին ու ազգականական բոլոր պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆի անակնկալ մահուան տխուր առթիւ, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր անդամներուն անունով խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ իր ընտանիքի հարազատներուն եւ պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՃԵԱՆի մահուան տխուր առթիւ մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի տիկնոջ, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:*

*«Մասիս»*

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԷՆՏԷՅԼ - ՊԸՐՊԷՆՔ - ԼԱ ՔՐԷՍԷՆԹ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

«ԿԱՅԾ» Երիտասարդական Նուագախումբը
Պէտք Ունի Հայերէն երգերու Ծանօթ
Երիտասարդ Երգիչ Կամ Երգչուհիի
Հետաքրքրուողները Կրնան Հեռաձայնել
Ռազմիկին` 818-590-2824

## ԲԱՐԻ ԱՌԱՔԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԹԷՊԷՏ ԲԱՅՑ՝ ՀԱՐՑԱԴՐՈՒՄ ՄԸ

*Շարունակուած էջ 1-էն*

կան ողբերգական կացութեամբ: Բոլորին առաջադրանքն էր սատար հանդիսանալ իր հայրենիքի տնտեսական բարգաւաճման: Ամէն հայ անհատ իր կեանքի գնով կ'ուզէր տէր կանգնիլ Արցախին, անոր հզօրացումին: Ամէն հայու երազն էր Հայաստան-Արցախ-Սփիւռք կապերու առաւելագոյն սերտացումը: Ամէն հայ նախանձախնդիր եւ օժանդակ էր իր մշակոյթին, անոր զարգացման: Մէկ խօսքով՝ ամէն մէկ հայ զօրավիգ էր այն բոլոր նախաձեռնութիւններուն, որոնք կը միտէին ուժաւորել հայն ու հայրենիքը եւ իր պահանջատիրական պայքարը:

Բաղդատական մը 2003-ին, եւ Երեքշաբթի, Մայիս 2, 2007-ին տրուած զոյգ զեկոյցներուն՝ ցոյց տուաւ պարզ կրկնութիւն մը, որոշ այն տարբերութեամբ, որ հոն տեղ գտած էր ուշադրութիւն գրաւող խիստ վիճելի մտորում մը.

Պրն. Արա Աբրահամեան սխալ կը գտնէր հայրենի իշխանութիւնները քննադատելու հայ Սփիւռքի կեցուածքը: Ան կը գտնէր, թէ «Հայ Սփիւռքը իրաւունք չունէր քննադատելու հայրենի իշխանութիւնները: Հայ Սփիւռքը պարտէր սատար հանդիսանայ անոնց: Գործակցիլ անոնց հետ: Բերել կառուցողական նպաստ: Այս գործընթացը կը բաջալերէր, կը զօրացնէր, կը բարգաւաճեցնէր Հայաստանը: Վերապահ, սրդողած ընթացքը, ընդհակառակը, կը վիժեցնէր ամէն յառաջընթաց»:

Պրն. Աբրահամեանին՝ որ ծանօթ է հայրենի իշխանութիւններու ապիկար գործունէութիւնը խիստ ոնով քննադատելու վարքագծով՝ հարց կու տանք իրեն, թէ այդ ու՞ր է տեսնուած, որ պետական մակարդակի գործուած սխալներ, ապօրինութիւններ, անարդարութիւններ, հակաժողովրդական տնօրինումներ անտեսուին եւ վարձատրուին լռութեամբ, յանուն՝ իշխանութիւնները չի քննադատելու դատումով: Քննադատութիւններու դերը մեծ ու գերազանցապէս կառուցողական են: Այդ հաստատումները աշխարհով մէկ ընդունուած իրապաշտական տեսութիւններ են, որոնք կը կիրարկուին ամէնուր, սկսած աշխարհի ամենէն յետամնաց երկիրներէն ամենէն յառաջընթացները:

Այսօրուան դրուածքով, մեր հայրենաբնակ ազգաբնակչութիւնը պէտք ունի սփիւռքահայ կառոյցներու զօրակցութեան, կարենալ հաւաքաբար վերականգնելու համար արդար՝ քաղաքական, ընկերային, սահմանադրական, տնտեսական, ժողովրդավար եւ բոնարարքներէ զերծ ընկերային հիմունքներով հայրենիքը: Այսօր աշխարհով մէկ, հայ եւ օտար դիւանագիտութիւնը հարցականի տակ կ'առնէ յառաջիկայ շաբաթներուն Հայաստանի մէջ Ներկայ, Մայիս ամսուան մէջ տեղի ունենալիք Ազգային Ժողովի ընտրութիւններու արդար կատարողութիւնը: Լռե՞նք, Պրն. Աբրահամեան:

Սփիւռքահայը, Պրն. Աբրահամեան իր բոլոր կառոյցներով, սկսելով ձեր նախագահած Համահայկական Քոնկրեսէն, ամբողջապէս նուիրուած է իր հայրենիքի վերականգնումի աշխատանքներուն: Ան ոչինչ կը խնայէ անոր ծաղկումին համար: Ան կ'օժանդակէ նիւթապէս, բարոյապէս, քաղաքականապէս եւ մարդուժի տեսակէտէն: Ան կ'օժանդակէ առանց դադարի, առանց խնայելու եւ առանց սակարկելու:

Ինչու՞ սխալ կը գտնէք սփիւռքահայու քննադատելու իրաւունքը:

Աւելի լաւ պիտի չըլլա՞ր, Պրն. Աբրահամեան, որ հայրենի իշխանութիւնները գործէին այնպէս, որ ոչ միայն սփիւռքահայը, ներառեալ հայրենաբնակ հայը, նաեւ՝ միջազգային հանրային կարծիքը, բոլորը մէկ՝ գովքը հիւսէին մեր հայրենի բոլոր իշխանաւորներուն:

## «ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*թեան, այնպէս ալ սփիւռքահայ կեանքէն ներս: Խրլոպեանն իր հերթին իր երախտագիտութիւնը յայտնեց Աստուծոյ, Հայց. Առաք. Եկեղեցւոյ, հայ ժողովուրդին, իր ընկերներուն, գրքի մեկենաս Միմի եւ Արմէն Յարութիւնեան ամոլին, իր ընտանիքի անդամներուն ու երեկոյի բոլոր մասնակիցներուն:*

*Հիւրասիրութիւնը վերածուեցաւ բովանդակալից ընկերային պահի: Երեկոն մեծ հմտութեամբ, ջերմութեամբ ու բարձր գեղարուեստական վարպետութեամբ վարեց խօսքի վարպետ Անահիտ Մարտիրոսեանը:*

*Պարտք կը զգանք նշելու, որ գրքի կողքի նկարը կը պատկերէ ականաւոր հայ քանդակագործ Արթօ Չագմագճեանի «Ցեղասպանութիւն» քանդակի պատկերը, իսկ գրքի առաջին էջէն ընթերցողին կը նայի հեղինակի ճեպանկարը, որ գծագրած է արդի հայ գեղանկարչութեան ականաւոր ներկայացուցիչ Մինաս Աւետիսեանը Ապրիլ 24, 1974-ին, երբ երկու ընկերները վերադարձած էին Ծիծեռնակաբերդէն եւ կը քննարկէին ցեղասպանագիտական հարցեր: Անոնք իրենց արտացոլումը գտած են Խրլոպեանի սոյն հատորին մէջ: Հանդիսութեան աւարտին հեղինակը մակագրեց իր գիրքը ընթերցող հասարակութեան:*

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*եւ յայտարարեց, թէ առանց նախապայմանի Հայաստան պատրաստ է դիւանագիտական կապ հաստատելու Թուրքիայի հետ՝ բանալով նաեւ սահմանները առեւտուրի եւ այցելութիւններու:*

*Պրն. Լիլոյեան խոր ակնածանքով յայտնեց, թէ դարերէ ի վեր մեր Քրիստոնէական կրօնը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ մեր հոգեւորականները տէր կանգնած են Հայ Ժողովուրդին եւ մեր ժողովուրդը հոգեւոր սնունդ ստանալով սատարած է Հայրենիքի եւ մշակոյթի առաւել պայծառացման: Ակնարկութիւն ըրաւ նաեւ, Հայաստանի Խորհրդարանին որդեգրած պետութեան եւ Մայր Աթոռի միջեւ յարաբերութեան նոր օրէնքը մասին, որ աւելի սերտ գործակցութիւն պիտի ստեղծէ՝ պետութիւն եւ եկեղեցի միասնաբար նուիրուելու հայրենակերտումի առաքելութեան:*

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
*Proud Past, Exciting Future.*

AGBU
GLENDALE / PASADENA CHAPTER

*Invites you to*

# Cinco de Mayo Fiesta

**SATURDAY, MAY 5th, 2007**

**7:30 PM**

**ALEX MANOOGIAN CENTER**
2495 E. Mountain Street, Pasadena

*-- Mexican Buffet --*
*DJ Harry Grant*
*Latin Dance Performance*
*Margaritas, Cerveza (Beer), Churros*
*and more Surprises!!!*

ADULTS: $20
CHILDREN 12 AND UNDER: $10

RESERVATIONS REQUIRED!
LIMITED SPACES!

For reservation or more or more information please call A.G.B.U. office (626) 794-7942

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School

# AGBU HIGH SCHOOL PASADENA

THE QUALITY AND SAFE ALTERNATIVE
FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

## Registration in Progress 2007-2008 Academic Year Grades 9-12

*Experienced & Caring Faculty*
*College Preparatory Programs*

**AGBU HIGH SCHOOL - PASADENA**
**2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104**
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

*For more information, campus tour and a meeting with the Principal, please call 626-794-0363.*

AGBU GLENDALE / PASADENA CHAPTER

## YOGA YOGA YOGA YOGA YOGA YOGA

***COME JOIN US IN A FUN CLASS GUARANTEED TO CHALLENGE YOUR MIND AND BODY!***

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.
Yoga is neither a religion nor simply a "workout".

*LIMITED SPACES*

For Information of reservations please call A.G.B.U. office (626) 794-7942

**AGBU CENTENNIAL SPONSORS**

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com